

Համարը ՀՕ-123-Ն  
Տիպը Օրենսգիրք  
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2005.01.19/4(376)  
Հոդ.60

Ընդունող մարմինը ՀՀ Ազգային ժողով  
Ստորագրող մարմինը ՀՀ Նախագահ  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 19.04.2005

Տեսակը Ինկորպորացիա  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 09.11.2004  
Ստորագրման ամսաթիվը 08.12.2004  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը

- + Կապեր այլ փաստաթղթերի հետ
- + Փոփոխումներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ

# Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 9-ին

Բ Ա Ժ Ի Ն Ի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ 1.

### ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

#### Հոդված 1. Ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքները

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:

Պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների առաջնային պաշտպանությունը:

Ընտանեկան օրենսդրությունը ելնում է ընտանիքի ամրապնդման, ընտանեկան հարաբերությունները փոխադարձ սիրո ու հարգանքի վրա կառուցելու, ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության, ընտանեկան գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, ընտանիքում երեխաների դաստիարակության առաջնայնության, ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների անարգել իրականացումն ապահովելու, այդ իրավունքների դատական պաշտպանության հնարավորության անհրաժեշտությունից:

2. Ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունը:

3. Կանայք և տղամարդիկ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս օգտվում են հավասար իրավունքներից:

4. Ընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացվում է տղամարդու և կնոջ ամուսնական դաշինքի կամավորության, ընտանիքում ամուսինների իրավունքների հավասարության, ընտանեկան հարցերը փոխադարձ համաձայնությամբ լուծելու, նրանց բարեկեցության մասին հոգատարության, ընտանիքի անչափահաս և անաշխատունակ անդամների իրավունքների և շահերի առաջնային պաշտպանությունն ապահովելու սկզբունքներին համապատասխան:

5. Ամուսնանալիս և ընտանեկան հարաբերություններում արգելվում է ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից կախված խտրականությունը:

6. Ամուսնանալու ազատությունը կարող է սահմանափակվել միայն սույն օրենսգրքով սահմանված դեպքերում արողջության և բարոյականության պաշտպանության նպատակով:

7. Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր):

8. Եթե որևէ նորմ կարող է տարաբնույթ կիրառվել, ապա այն կիրառելիս առաջնահերթ հաշվի են առնվում Երեխայի լավագույն շահերը:

*(1-ին հոդվածը խմբ., լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

**Հոդված 2. Ընտանեկան օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունները**

Ընտանեկան օրենսդրությունը սահմանում է ամուսնության, ամուսնությունը դադարելու և անվավեր ճանաչելու պայմաններն ու կարգը, կարգավորում է անձնական ոչ գույքային և գույքային հարաբերություններն ընտանիքի անդամների միջև՝ ամուսինների, ծնողների և զավակների (որդեգրողների ու որդեգրվածների), իսկ ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և շրջանակներում՝ մյուս ազգականների և այլ անձանց միջև, ինչպես նաև որոշում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը և դաստիարակությունն ընտանիքում կազմակերպելու ձևերն ու կարգը:

*(2-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

**Հոդված 3. Ընտանեկան հարաբերություններ կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը**

1. Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև իրավական այլ ակտերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ընտանեկան օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

**Հոդված 4. Ընտանեկան հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրության կիրառումը**

Ընտանիքի անդամների միջև սույն օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանված և ընտանեկան օրենսդրությամբ չկարգավորվող գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը կիրառվում է այնքանով, որքանով դա չի հակասում ընտանեկան հարաբերությունների էությանը:

**Հոդված 5. Ընտանեկան հարաբերությունների նկատմամբ ընտանեկան օրենսդրության և քաղաքացիական օրենսդրության կիրառումն անալոգիայի կարգով**

Եթե ընտանիքի անդամների միջև հարաբերությունները կարգավորված չեն ընտանեկան օրենսդրությամբ կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում են նշված հարաբերություններն ուղղակիորեն կարգավորող քաղաքացիական իրավունքի նորմերը, ապա նման հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են նույնպիսի հարաբերությունները կարգավորող ընտանեկան և (կամ) քաղաքացիական իրավունքի նորմերը (օրենքի անալոգիա): Օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում ընտանիքի անդամների իրավունքներն ու պարտականությունները որոշվում են՝ ելնելով ընտանեկան կամ քաղաքացիական իրավունքի սկզբունքներից (իրավունքի անալոգիա):

**Գ Լ ՈՒ Խ 2.**

***ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԲՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ***

**Հոդված 6. Ընտանեկան իրավունքների իրականացումը և ընտանեկան պարտականությունների կատարումը**

1. Քաղաքացիներն իրենց հայեցողությամբ իրականացնում են ընտանեկան հարաբերություններից բխող և օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքներ (ընտանեկան իրավունքներ, ընդ որում՝ այդ իրավունքների պաշտպանությունը), եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

2. Ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների իրականացումը և իրենց պարտականությունների կատարումը չպետք է խախտեն ընտանիքի այլ անդամների և այլոց իրավունքները, ազատությունները և օրինական շահերը:

3. Ընտանեկան իրավունքները պահպանվում են օրենքով, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք իրականացվում են այդ իրավունքների նշանակությանը հակառակ:

**Հոդված 7. Ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունը**

Ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է դատական կարգով, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ համապատասխան պետական մարմինների կամ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից:

**Հոդված 8. Հայցային վաղեմության կիրառումն ընտանեկան հարաբերություններում**

Ընտանեկան հարաբերություններից բխող պահանջների նկատմամբ հայցային վաղեմություն չի կիրառվում, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Այդ դեպքերում հայցային վաղեմություն կիրառվում է քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Բ Ա Ժ Ի Ն II**

**ԱՍՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԴԱՂԱՐՈՒՄԸ**

**Գ Լ ՈՒ Խ 3.**

**ԱՍՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԿՆՔԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ**

**Հոդված 9. Ամուսնություն կնքելու կարգը**

1. Ամուսնությունը կնքվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ:

2. Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցման պահից:

**Հոդված 10. Ամուսնության կնքման պայմանները**

1. Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:

Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է:

2. Արգելվում է ամուսնության կնքումը սույն օրենսգրքի 11-րդ հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

*(10-րդ հոդվածը խմբ. 30.04.13 ՀՕ-26-Ն)*

**Հոդված 11. Ամուսնության կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները**

Արգելվում է ամուսնություն կնքել՝

ա) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ.

բ) մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև.

գ) որդեգրողների և որդեգրվածների միջև.

դ) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ:

**Հոդված 12. Ամուսնացող անձանց բժշկական հետազոտությունը**

1. Ամուսնացող անձանց բժշկական հետազոտությունը, ինչպես նաև բժշկագենետիկական և ընտանիքի պլանավորման հարցերով խորհրդատվությունն անցկացնում են առողջապահական կազմակերպությունները՝ պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում ամուսնացող անձանց ցանկությամբ:

2. Ամուսնացող անձի հետազոտության արդյունքները համարվում են բժշկական գաղտնիք: Այդ արդյունքները

հետազոտություն անցած անձի համաձայնությամբ կարող են հաղորդվել այն անձին, որի հետ նա մտադիր է ամուսնանալ:

3. Եթե ամուսնացած անձը մյուս ամուսնուց թաքցրել է ամուսնության պետական գրանցման պահին իր մոտ սեռավարակի (ընդ որում՝ մարդու իմունային անբավարարության վիրուսի), ինչպես նաև հոգեկան հիվանդության և թմրամոլության, թունամոլության առկայության փաստը, ապա մյուս ամուսինն իրավունք ունի ամուսնությունն անվավեր ճանաչելու համար դիմելու դատարան:

#### **Գ Լ ՈՒ Խ 4.**

### ***ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԴՄԱՆ***

#### **Հոդված 13. Ամուսնության դադարման հիմքերը**

1. Ամուսնությունը դադարում է ամուսիններից մեկի մահվան կամ նրան դատարանի կողմից մահացած ճանաչելու հետևանքով:

2. Ամուսնությունը կարող է դադարել ամուսնալուծության միջոցով՝ ամուսինների կամ ամուսիններից մեկի դիմումի հիման վրա, ինչպես նաև դատարանի կողմից անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալի դիմումի հիման վրա:

3. Ամուսինը, առանց կնոջ համաձայնության, իրավունք չունի ամուսնալուծության դիմում ներկայացնելու կնոջ հղիության ընթացքում:

#### **Հոդված 14. Ամուսնալուծության կարգը**

Ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով:

#### **Հոդված 15. Ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում**

1. Ամուսինների միջև ամուսնալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում նրանց ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում:

2. Ամուսիններից մեկի դիմումի հիման վրա ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում, եթե մյուս ամուսինը՝

ա) դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող.

բ) դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ.

գ) դատապարտվել է ազատազրկման՝ երեք տարուց ոչ պակաս ժամկետով:

3. Ամուսինների ընդհանուր գույքի բաժանման, անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոցը հոգալու վերաբերյալ վեճերը, ինչպես նաև երեխաների պատճառով ամուսինների միջև ծագող վեճերը քննարկվում են դատական կարգով՝ անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնությունը լուծելուց՝ սույն օրենսգրքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով:

#### **Հոդված 16. Ամուսնալուծությունը դատական կարգով**

1. Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝

ա) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը.

բ) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց.

գ) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով:

2. Ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանը իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու ամուսիններին հաշտեցնելու համար և իրավունք ունի գործի քննությունը հետաձգելու՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչև երեքամսյա ժամկետ: Դատարանն իրավունք ունի նաև կողմերին առաջարկելու ամուսնալուծության, ինչպես նաև ամուսնալուծվելիս ամուսինների միջև ծագող վեճերով գործը լուծել հաշտարարության միջոցով՝ պարզաբանելով վերջինիս էությունը, ինչպես նաև քայլեր ձեռնարկելու ամուսիններին հաշտեցնելու համար:

Այս դեպքում ամուսնալուծությունը կատարվում է, եթե ամուսինները (նրանցից մեկը) պնդում են ամուսնալուծվելու համար:

3. Ամուսնալուծության համար ամուսինների փոխադարձ համաձայնության առկայության դեպքում դատարանը

լուծում է ամուսնությունը ամուսինների կողմից ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից ոչ ուշ՝ մեկամսյա ժամկետում:

**(16-րդ հոդվածը լրաց. 07.05.15 ՀՕ-47-Ն)**

**Հոդված 17. Ամուսնալուծվելիս ամուսինների միջև ծագող վեճերի քննարկման կարգը**

1. Ղատական կարգով ամուսնալուծվելիս, ինչպես նաև անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնալուծվելիս ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետ են ապրելու երեխաները, երեխաներին և (կամ) անաշխատունակ անապահով ամուսնուն պահելու համար ապրուստի միջոցները հոգալու կարգի, այդ միջոցների չափերի կամ ամուսինների ընդհանուր գույքի բաժանման մասին:

2. Ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է՝

ա) որոշել, թե ամուսնալուծությունից հետո ծնողներից ում հետ պետք է ապրեն երեխաները.

բ) որոշել, թե որ ծնողից և ինչ չափով պետք է ավիմենտ (ապրուստավճար) բռնագանձվի.

գ) ամուսինների (ամուսիններից մեկի) պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանումը.

դ) ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող մյուս ամուսնու պահանջով որոշել այդ միջոցների չափը:

3. Եթե գույքի բաժանումը շոշափում է երրորդ անձանց շահերը, ապա դատարանը կարող է գույքի բաժանման մասին պահանջն առանձնացնել որպես առանձին վարույթ:

4. Եթե ամուսինների ընդհանուր գույքի բաժանումը չի շոշափում երրորդ անձանց շահերը, ապա ամուսիններն իրենց ընդհանուր գույքը բաժանելու հետ կապված վեճը փոխադարձ համաձայնությամբ կարող են հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Արբիտրաժային համաձայնությունը չի սահմանափակում ամուսնու գույքը բաժանելու հետ կապված վեճը դատարան հանձնելու իրավունքը, բացառությամբ եթե արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը:

**(17-րդ հոդվածը լրաց. 19.06.15 ՀՕ-78-Ն)**

**Հոդված 18. Ամուսնության դադարման պահը ամուսնալուծության դեպքում**

1. Ամուսնությունը, որը լուծվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնում, համարվում է դադարած ամուսնալուծության պետական գրանցման պահից:

2. Ամուսնությունը, որը լուծվում է դատական կարգով, համարվում է դադարած դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Ղատարանն ամուսնալուծության մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում պարտավոր է այդ վճռի քաղվածքն ուղարկել ամուսնության պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

Ղատական կարգով կատարված ամուսնալուծությունը ենթակա է պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Ամուսնալուծված ամուսինների նոր ամուսնության պետական գրանցում չի կատարվում առանց ամուսնալուծության վկայականի առկայության:

**Հոդված 19. Ամուսնության վերականգնումը մահացած կամ անհայտ բացակայող ճանաչված ամուսնու ներկայանալու դեպքում**

Ղատարանի կողմից մահացած կամ անհայտ բացակայող ճանաչված ամուսնու ներկայանալու և դատարանի համապատասխան վճռի վերանայման դեպքում ամուսինների համատեղ դիմումի հիման վրա ամուսնությունը կարող է վերականգնել քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինը, բացառությամբ այն դեպքերի, երբ մյուս ամուսինը սահմանված կարգով նոր ամուսնություն է կնքել:

**Գ Լ ՈՒ Խ 5.**

**ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

**Հոդված 20. Ամուսնությունն անվավեր ճանաչելը**

1. Ամուսնությունն անվավեր է ճանաչում դատարանը:

2. Անվավեր է ճանաչվում սույն օրենսգրքի 10-րդ, 11-րդ հոդվածներով և 12-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ամուսնությանն արգելք հանդիսացող հանգամանքների առկայությամբ կնքված ամուսնությունը, ինչպես նաև այն ամուսնությունը, երբ ամուսինները կամ նրանցից մեկը ամուսնությունը գրանցել են առանց ընտանիք ստեղծելու մտադրության (կեղծ ամուսնություն):

3. Ղատարանն ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու

պահից երեք օրվա ընթացքում պարտավոր է այդ վճռի քաղվածքն ուղարկել ամուսնության պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

4. Ամուսնությունն անվավեր է ճանաչվում դրա պետական գրանցման պահից:

**Հոդված 21. Ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձինք**

Ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեն

ա) անչափահաս ամուսինը, նրա ծնողները (օրինական ներկայացուցիչները), խնամակալության և հոգաբարձության մարմինը, եթե ամուսնությունը կնքվել է ամուսնական տարիքի չհասած անձի հետ: Անչափահաս ամուսնու տասնութ տարին լրանալուց հետո ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունի միայն այդ ամուսինը:

բ) ամուսինը, որի իրավունքները ամուսնության կնքմամբ խախտվել են, եթե ամուսնությունը կատարվել է ամուսիններից մեկի կամավոր համաձայնության բացակայության դեպքում՝ հարկադրանքի, խաբեության, մոլորության կամ ամուսնության պետական գրանցման պահին իր գործողությունները գիտակցելու և դրանք ղեկավարելու անհնարինության արդյունքով:

գ) ամուսինը, որը չի իմացել ամուսնության կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքների առկայության մասին, դատարանի կողմից անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալը, նախորդ չամուսնալուծված ամուսնության մեջ գտնվող ամուսինը, այլ անձինք, որոնց իրավունքները խախտվել են սույն օրենսգրքի 11-րդ հոդվածի պահանջների խախտումով կատարված ամուսնության կնքմամբ, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմինը:

դ) ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսինը:

ե) ամուսինը, որի իրավունքները խախտվել են սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանգամանքների առկայության պատճառով

**Հոդված 22. Ամուսնության անվավերությունը բացառող հանգամանքները**

1. Պատարանը կարող է ամուսնությունը վավերական ճանաչել, եթե ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին գործի քննության պահին վերացել են դրա կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները:

2. Կնոջ հղիության կամ երեխա ծնվելու դեպքում, կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես նաև ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում դատարանը կարող է մերժել ամուսնացող անձի հետ կնքված ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին հայցը:

3. Պատարանը չի կարող ամուսնությունը ճանաչել կեղծ, եթե նման ամուսնություն գրանցած անձինք մինչև դատարանի կողմից գործի քննությունը, փաստորեն, ընտանիք են կազմել:

4. Ամուսնության դադարումից հետո ամուսնությունը չի կարող անվավեր ճանաչվել, բացառությամբ ամուսինների միջև օրենքով արգելված ազգակցական կապի առկայության կամ ամուսնության պետական գրանցման պահին ամուսիններից մեկի կողմից այլ չլուծված ամուսնության մեջ գտնվելու դեպքերի:

**Հոդված 23. Ամուսնությունն անվավեր ճանաչելու հետևանքները**

1. Պատարանի կողմից անվավեր ճանաչված ամուսնությունը չի առաջացնում սույն օրենսգրքով ամուսինների համար նախատեսված իրավունքներ և պարտականություններ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերի:

2. Ամուսնությունն անվավեր ճանաչած անձանց կողմից համատեղ ձեռք բերված գույքի նկատմամբ կիրառվում են բաժնային սեփականության մասին քաղաքացիական օրենսդրության նորմերը:

3. Ամուսնությունն անվավեր ճանաչած անձանց կնքած ամուսնական պայմանագիրը, որպես կանոն, ճանաչվում է անվավեր:

4. Ամուսնությունն անվավեր ճանաչելը չի ազդում այդպիսի ամուսնությունից ծնված կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահից հետո՝ երեք հարյուր օրվա ընթացքում, ծնված երեխաների իրավունքների վրա:

5. Ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին վճիռ կայացնելիս դատարանը կարող է ճանաչել ամուսնուց ապրուստի միջոց ստանալու՝ մյուս ամուսնու (բարեխիղճ ամուսնու) իրավունքը, որի իրավունքները խախտվել են նման ամուսնության կնքմամբ, իսկ մինչև ամուսնությունն անվավեր ճանաչելու պահը ձեռք բերված համատեղ գույքը բաժանելիս իրավունք ունի կիրառելու սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի նորմերը, ինչպես նաև լրիվ կամ մասնակիորեն վավեր ճանաչելու ամուսնական պայմանագիրը:

Բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահանջելու հատուցել իրեն պատճառված գույքային վնասը՝ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Ամուսնությունն անվավեր ճանաչելու դեպքում բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահպանելու ամուսնության պետական գրանցման ժամանակ ընտրված ազգանունը:

**Բ Ա Ճ Ի Ն III**

**ԱՍՈՒՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԱՍՏԻՄԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Հոդված 24. Ամուսինների իրավահավասարությունն ընտանիքում**

1. Ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում:

2. Մայրության, հայրության, երեխաների դաստիարակության և կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցեր ամուսինները համատեղ լուծում են՝ ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից:

3. Ամուսիններն ընտանիքում պարտավոր են իրենց հարաբերությունները կառուցել փոխադարձ օգնության և հարգանքի վրա, նպաստել ընտանիքի ամրությանը, հոգ տանել իրենց երեխաների բարեկեցության ու զարգացման համար:

**Հոդված 25. Ամուսինների կողմից ազգանվան ընտրության իրավունքը**

1. Ամուսնանալիս ամուսինները, ըստ իրենց ցանկության, կարող են ամուսիններից մեկի ազգանունն ընտրել որպես ընդհանուր ազգանուն կամ պահպանել մինչամուսնական ազգանունը:

Ամուսինների ընդհանուր ազգանունը կարող է լինել ամուսիններից մեկի ազգանունը կամ այնպիսի ազգանուն, որը ներառում է ամուսինների ազգանունները միաժամանակ: Ընդհանուր ազգանունը չի կարող լինել երկու ազգանունից ավելի:

2. Ամուսիններից մեկի ազգանվան փոփոխությունը մյուս ամուսնու ազգանվան փոփոխություն չի առաջացնում:

3. Ամուսնալուծվելիս ամուսիններն իրավունք ունեն պահպանելու ընդհանուր ազգանունը կամ վերականգնելու իրենց մինչամուսնական ազգանունը:

**Գ Լ ՈՒ Խ 7.**

**ԱՍՏԻՄԱՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Հոդված 26. Ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը**

Ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

**Հոդված 27. Ամուսնական պայմանագիրը**

Ամուսնական պայմանագիրը ամուսնացող անձանց համաձայնությունն է կամ ամուսինների համաձայնությունը, որով որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները ամուսնության և (կամ) այն լուծվելու ընթացքում:

**Հոդված 28. Ամուսնական պայմանագրի կնքումը**

1. Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես մինչև ամուսնության պետական գրանցումը, այնպես էլ ամուսնության ցանկացած ժամանակահատվածում:

Ամուսնության պետական գրանցումից առաջ կնքված ամուսնական պայմանագիրն ուժի մեջ է մտնում ամուսնության պետական գրանցման պահից:

2. Ամուսնական պայմանագիրը կնքվում է գրավոր և ենթակա է նոտարական վավերացման:

**Հոդված 29. Ամուսնական պայմանագրի բովանդակությունը**

1. Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են փոփոխել ընդհանուր սեփականության շրջանակը, սահմանել համատեղ, բաժնային կամ յուրաքանչյուրի սեփականություն՝ ամուսինների ողջ գույքի, դրա առանձին տեսակների կամ ամուսիններից յուրաքանչյուրի գույքի նկատմամբ:

Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես ամուսինների առկա, այնպես էլ հետագայում ձեռք բերվելիք գույքի նկատմամբ:

Ամուսիններն իրավունք ունեն ամուսնական պայմանագրով որոշելու միմյանց ապրուստը հոգալու իրենց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, միմյանց եկամուտներին մասնակցելու եղանակները, իրենցից յուրաքանչյուրի կողմից ընտանեկան ծախսեր կատարելու կարգը, այն գույքը, որ պետք է հանձնվի իրենցից յուրաքանչյուրին ամուսնալուծվելիս, ինչպես նաև իրավունք ունեն ամուսնական պայմանագրով նախատեսելու իրենց գույքային հարաբերություններին վերաբերող ցանկացած այլ նորմեր: Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են նախատեսել ընդհանուր գույքը բաժանելու հետ կապված վեճն առևտրային արբիտրաժի միջոցով լուծելու հնարավորություն:

2. Ամուսնական պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները կարող են սահմանափակվել որոշակի ժամկետով կամ կախման մեջ դրվել որոշակի պայմանների վրա հասնելուց կամ հակառակը:

3. Ամուսնական պայմանագիրը չի կարող սահմանափակել ամուսինների իրավունակությունը կամ գործունակությունը, իրենց իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու նրանց իրավունքը, կարգավորել ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները, երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները, նախատեսել անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոց պահանջելու իրավունքը սահմանափակող նորմ, ներառել այլ պայմաններ, որոնք ամուսիններից մեկին դնում են անբարենպաստ իրավիճակի մեջ կամ հակասում են ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներին:

*(29-րդ հոդվածը լրաց. 19.06.15 ՀՕ-78-Ն)*

### **Հոդված 30. Ամուսնական պայմանագրի փոփոխումը և լուծումը**

1. Ամուսնական պայմանագիրն ամուսինների համաձայնությամբ կարող է փոփոխվել կամ լուծվել ցանկացած ժամանակ: Ամուսնական պայմանագիրը փոփոխվում և լուծվում է ամուսնական պայմանագիր կնքելու համար սահմանված կարգով:

Ամուսնական պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարում չի թույլատրվում:

2. Ամուսիններից մեկի պահանջով ամուսնական պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել դատական կարգով՝ պայմանագրերի փոփոխման և լուծման համար քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

3. Ամուսնական պայմանագրի գործողությունը դադարում է ամուսնության դադարման պահից, բացառությամբ այն պարտավորությունների, որոնք ամուսնական պայմանագրով նախատեսված են ամուսնությունը դադարելուց հետո ընկած ժամանակաշրջանի համար:

### **Հոդված 31. Ամուսնական պայմանագիրն անվավեր ճանաչելը**

1. Դատարանը կարող է ամուսնական պայմանագիրն անվավեր ճանաչել ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ գործարքների անվավերության մասին Քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով:

2. Դատարանը կարող է նաև ամուսնական պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչել ամուսիններից մեկի պահանջով, եթե այդ պայմանագրի պայմանները տվյալ ամուսնուն դնում են ծայրահեղ անբարենպաստ իրավիճակի մեջ: Ամուսնական պայմանագրի՝ սույն օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի այլ պահանջները խախտող պայմաններն առ ոչինչ են:

**Գ Լ ՈՒ Խ 8.**

### **ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

### **Հոդված 32. Ամուսինների գույքի վրա բռնագանձում տարածելը**

1. Ամուսիններից մեկի պարտավորություններով բռնագանձում կարող է տարածվել միայն այդ ամուսնու գույքի նկատմամբ: Այդ գույքն անբավարար լինելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու ամուսինների ընդհանուր սեփականության մեջ պարտապան ամուսնու հասանելիք բաժնի առանձնացումը՝ դրա նկատմամբ բռնագանձում տարածելու համար:

2. Ամուսինների ընդհանուր գույքի նկատմամբ բռնագանձումը տարածվում է ամուսինների ընդհանուր պարտավորություններով: Եթե դատավճռով հաստատվել է, որ ամուսինների ընդհանուր գույքը ձեռք է բերվել կամ ավելացել է ամուսիններից մեկի կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների հաշվին, ապա բռնագանձումը կարող է տարածվել համապատասխանաբար ամուսինների ընդհանուր համատեղ գույքի կամ դրա մի մասի վրա:

3. Իրենց երեխաների պատճառած վնասի համար ամուսինների պատասխանատվությունը որոշվում է քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով: Այդ դեպքում ամուսինների գույքի նկատմամբ բռնագանձումը կատարվում է սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան:

### **Հոդված 33. Ամուսնական պայմանագրի կնքելիս, փոփոխելիս և լուծելիս պարտատերերի իրավունքների երաշխիքները**

1. Ամուսինը պարտավոր է ծանուցել իր պարտատիրոջը (պարտատերերին) ամուսնական պայմանագրի կնքման, դրա փոփոխման կամ լուծման մասին: Այդ պարտականությունը չկատարելու դեպքում ամուսինը պատասխանատու է իր պարտավորություններով՝ անկախ ամուսնական պայմանագրի բովանդակությունից:

2. Պարտապան ամուսնու պարտատերը (պարտատերերը) իրավունք ունի պահանջելու փոփոխել իրենց միջև կնքված պայմանագրի պայմանները կամ լուծել պայմանագիրը՝ հանգամանքների էական փոփոխությունների պատճառով՝ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:



**Բ Ա Ժ Ի Ն IV**

**ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Գ Լ ՈՒ Խ 9.**

**ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍԵՐՍԱՆ ՓԱՍՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ**

**Հոդված 34. Ծնողների և երեխաների իրավունքների ու պարտականությունների ծագման հիմքը**

Ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները հիմնվում են երեխաների՝ օրենքով սահմանված կարգով հաստատված սերման փաստի վրա:

**Հոդված 35. Երեխայի սերման փաստի հաստատումը**

1. Երեխայի սերումը մորից (մայրությունը) հաստատվում է երեխայի՝ բժշկական կազմակերպությունում տվյալ մորից ծնված լինելու փաստը հավաստող փաստաթղթերի, իսկ եթե երեխան ծնվել է բժշկական կազմակերպությունից դուրս՝ համապատասխան բժշկական փաստաթղթերի, վկաների հայտարարությունների կամ այլ ապացույցների հիման վրա:

2. Միմյանց հետ ամուսնության մեջ գտնվող անձանցից, ինչպես նաև ամուսնալուծությունից կամ ամուսնությունն անվավեր ճանաչելուց հետո կամ երեխայի մոր ամուսնու մահվան պահից երեք հարյուր օրվա ընթացքում երեխա ծնվելու դեպքում երեխայի հայր է ճանաչվում երեխայի մոր ամուսինը (նախկին ամուսինը), եթե այլ բան չի ապացուցվել: Երեխայի մոր ամուսնու (նախկին ամուսնու) հայրությունը հավաստվում է նրանց ամուսնության պետական գրանցումով:

3. Երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի հայրությունը որոշվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ երեխայի հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա: Մոր մահվան կամ դատարանի կողմից վերջինիս անգործունակ ճանաչվելու կամ բնակության վայրը որոշելու անհնարինության կամ ծնողական իրավունքներից զրկվելու դեպքում երեխայի հայրությունը որոշվում է երեխայի հոր դիմումի հիման վրա՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի վճռով:

Այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ երեխայի ծնվելուց հետո հայրությունը որոշելու մասին համատեղ դիմում ներկայացնելը կարող է դառնալ անհնար կամ դժվարանալ, ապագա երեխայի ծնողները, որոնք ամուսնության մեջ չեն գտնվում, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին նման դիմում կարող են ներկայացնել մոր հղիության ընթացքում: Այդ դեպքում երեխայի ծնողների մասին գրառումը կատարվում է երեխայի ծնվելուց հետո:

4. Չափահաս անձի նկատմամբ հայրության որոշում թույլատրվում է միայն իր համաձայնությամբ, իսկ եթե նա դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ նրա խնամակալի (հոգաբարձուի) կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությամբ:

*(35-րդ հոդվածը խմբ. 08.02.11 ՀՕ-46-Ն)*

**Հոդված 36. Հայրությունը դատական կարգով որոշելը**

Ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում, եթե բացակայում է ծնողների համատեղ դիմումը կամ երեխայի հոր դիմումը, ապա որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստը (հայրությունը) որոշվում է դատական կարգով՝ համապատասխանաբար ծնողներից մեկի կամ մոր, երեխայի խնամակալի (հոգաբարձուի), կամ այն անձի դիմումի հիման վրա, որի խնամքին է գտնվում երեխան, իսկ երեխայի չափահաս դառնալուց հետո՝ վերջինիս ներկայացրած դիմումի հիման վրա: Այս դեպքում դատարանը հաշվի է առնում ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի այդ անձից:

**Հոդված 37. Հայրության ճանաչման փաստի դատական հաստատումը**

Իրեն երեխայի հայր ճանաչած, բայց երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի մահվան դեպքում վերջինիս որպես երեխայի հայր ճանաչելու (հայրության) փաստը կարող է հաստատվել դատական կարգով՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված նորմերով:

**Հոդված 38. Երեխայի ծնողների գրառումը ծննդի պետական գրանցման գրքում**

Ծննդի պետական գրանցման գրքում երեխայի ծնողների գրառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հոդված 39. Հայրության (մայրության) վիճարկումը**

1. Սույն օրենսգրքի 38-րդ հոդվածին համապատասխան՝ ծննդի պետական գրանցման գրքում ծնողների վերաբերյալ կատարած գրառումը կարող է վիճարկվել միայն դատական կարգով որպես երեխայի հայր կամ մայր

գրառված անձի կամ, փաստորեն, երեխայի հայր կամ մայր համարվող անձի պահանջով, խնամակալի (հոգաբարձուի), դատարանի կողմից անգործունակ ճանաչված ծնողի խնամակալի, դատարանի կողմից սահմանափակ գործունակ ճանաչված ծնողի հոգաբարձուի, ինչպես նաև չափահաս դարձած երեխայի պահանջով:

2. Ամուսնության մեջ չգտնվող ծնողներից ծնված երեխայի՝ ծննդի պետական գրանցման գրքում հայր գրառված անձի հայրությունը վիճարկելու մասին պահանջը չի կարող բավարարվել, եթե ապացուցվի, որ որպես երեխայի հայր գրառվելու պահին այդ անձին հայտնի է եղել, որ ինքը, փաստորեն, չի համարվում երեխայի հայրը:

3. Ամուսինը, որն օրենքով սահմանված կարգով գրավոր համաձայնություն է տվել կիրառելու արհեստական սաղմնավորման կամ սաղմի պատվաստման մեթոդները, երեխայի ծնունդը գրանցելուց հետո իրավունք չունի վիճարկելու այդ ճանապարհով ծնված երեխայի հայրությունը:

Ամուսինները, որոնք համաձայնություն են տվել կատարելու սաղմի պատվաստում և պտղի հասունացում այլ կնոջ միջոցով, ինչպես նաև կինը, որի միջոցով կատարվել է պտղի հասունացումը, երեխայի ծնունդը գրանցելուց հետո իրավունք չունեն հենվելու այդ հանգամանքի վրա:

*(39-րդ հոդվածը խմբ. 08.02.11 ՀՕ-46-Ն)*

#### **Հոդված 40. Ամուսնության մեջ չգտնվող անձանցից ծնված երեխաների իրավունքներն ու պարտականությունները**

Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով հայրությունը որոշելիս երեխաները ծնողների և նրանց ազգականների նկատմամբ ունեն նույնպիսի իրավունքներ ու պարտականություններ, ինչպիսիք ունեն ամուսնության մեջ գտնվող անձանցից ծնված երեխաները:

### **Գ Լ ՈՒ Խ 10.**

#### ***ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ***

#### **Հոդված 41. Ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքը**

1. Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ լրիվ գործունակ է ճանաչվում ավելի վաղ:

2. Յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին:

Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, իր շահերի ապահովության, համակողմանի զարգացման, իր մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք:

Ծնողների բացակայության, նրանց ծնողական իրավունքներից զրկված լինելու և ծնողական հոգատարությունից զրկվելու այլ դեպքերում ընտանիքում դաստիարակվելու երեխայի իրավունքն ապահովում է խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ սույն օրենսգրքի 17-րդ գլխի նորմերով սահմանված կարգով:

*(41-րդ հոդվածը խմբ. 08.02.11 ՀՕ-46-Ն, խմբ., փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

#### **Հոդված 42. Ծնողների և այլ ազգականների հետ շփվելու երեխայի իրավունքը**

1. Երեխան ունի իր ծնողների, պապերի և տատերի, եղբայրների, քույրերի, ինչպես նաև այլ ազգականների հետ շփվելու իրավունք: Ծնողների ամուսնության դադարեցումը, այն անվավեր ճանաչվելը կամ նրանց առանձին ապրելը չեն սահմանափակում երեխայի իրավունքները:

Ծնողներից առանձին (այդ թվում՝ տարբեր պետություններում) ապրելու դեպքում երեխան իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք ունի, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին:

2. Արտակարգ իրադրության մեջ գտնվող (ծերբակալված, կալանավորված, բժշկական կազմակերպությունում գտնվելու և այլ դեպքերում) երեխան իր ծնողների և մերձավոր ազգականների, ինչպես նաև արտակարգ իրադրության մեջ գտնվող ծնողն իր երեխայի հետ շփվելու իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով:

*(42-րդ հոդվածը փոփ., խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

#### **Հոդված 43. Երեխայի պաշտպանության իրավունքը**

1. Երեխան ունի իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրավունք:

Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում են ծնողները (օրինական ներկայացուցիչները), իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը:

Օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչված անչափահաս իր իրավունքները (ընդ որում՝ պաշտպանության իրավունքը) և պարտականությունները ինքնուրույն իրականացնելու իրավունք ունի:

2. Երեխան ունի իր ծնողների (օրինական ներկայացուցիչների) չարաշահումներից պաշտպանվելու իրավունք:

Երեխայի իրավունքների և շահերի խախտման դեպքում (ընդ որում՝ ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթության տալու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ ծնողական իրավունքները չարաշահելու դեպքերում), երեխան իրավունք ունի պաշտպանության համար ինքնուրույն դիմելու խնամակալության և հոգաբարձության մարմին:

3. Պաշտոնատար անձինք և այլ քաղաքացիներ, որոնց հայտնի են դարձել երեխայի կյանքին և առողջությանը սպառնալու, նրա իրավունքների և շահերի խախտումների դեպքեր, այդ մասին պետք է հայտնեն երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին: Նման տեղեկություններ ստանալուն պես խնամակալության և հոգաբարձության մարմինը պետք է ձեռնարկի երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ:

#### **Հոդված 44. Սեփական կարծիքն արտահայտելու երեխայի իրավունքը**

1. Երեխան իրավունք ունի իր իրավունքներն ու շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքը ընտանիքում, դատական և այլ մարմիններում:

1.1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Երեխայի կարծիքը լսելիս իրավասու մարմինը օրենքով նախատեսված դեպքերում ներգրավում է մանկական հոգեբանի կամ մանկավարժի կամ սոցիալական աշխատողի:

2. Տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝ կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում:

3. Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տասը տարին լրացած երեխայի վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ դատարանը կարող են որոշում ընդունել միայն նրա համաձայնությամբ:

*(44-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

#### **Հոդված 45. Երեխայի անուն, հայրանուն և ազգանուն ունենալու իրավունքը**

1. Երեխան ունի անուն, հայրանուն և ազգանուն ունենալու իրավունք:

2. Երեխային անուն տրվում է ծնողների համաձայնությամբ, իսկ հայրանուն տրվում է հոր անունով՝ սույն օրենսգրքով նախատեսված կարգով:

3. Երեխայի ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով: Եթե ծնողները կրում են տարբեր ազգանուններ, ապա երեխային ծնողների համաձայնությամբ տրվում է հոր կամ մոր ազգանունը:

4. Ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները լուծում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

5. Եթե երեխայի հայրությունը չի որոշվել, ապա նրան անուն է տրվում մոր ցուցումով, հայրանուն՝ որպես երեխայի հայր գրառված անձի անունով, ազգանուն՝ մոր ազգանունով:

#### **Հոդված 46. Երեխայի անունը և ազգանունը փոխելը**

1. Մինչև երեխայի տասը տարին լրանալը նրա ծնողների համատեղ, իսկ ծնողներից մեկի մահացած լինելու կամ անհայտ բացակայող կամ անգործունակ ձանաչելու մասին դատարանի վճռի առկայության դեպքում ծնողներից մեկի դիմումի հիման վրա քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները փոխում են երեխայի անունը, ինչպես նաև նրան տրված ազգանունը մյուս ծնողի ազգանունով:

2. Եթե ծնողները ապրում են առանձին, և ծնողը, որի մոտ ապրում է երեխան, ցանկանում է նրան տալ իր ազգանունը, այդ հարցը լուծվում է՝ հաշվի առնելով մյուս ծնողի կարծիքը:

Մյուս ծնողի կարծիքը հաշվի առնելը պարտադիր չէ, եթե՝

1) հնարավոր չէ պարզել նրա բնակության վայրը.

2) նա գրկված է ծնողական իրավունքներից.

3) նա դատարանի կողմից ձանաչված է անգործունակ.

4) նա, առանց հարգելի պատճառների, խուսափում է երեխային դաստիարակելուց ու պահելուց:

3. Տասը տարին լրացած երեխայի անվան փոխումը կարող է կատարվել երեխայի համաձայնությամբ, իսկ ազգանվան փոխումը՝ հաշվի առնելով երեխայի կարծիքը:

*(46-րդ հոդվածը խմբ. 08.02.11 ՀՕ-46-Ն, 21.12.17 ՀՕ-10-Ն)*

#### **Հոդված 47. Երեխայի գույքային իրավունքները**

1. Երեխան իր ծնողներից և ընտանիքի այլ անդամներից ապրուստի միջոց պահանջելու իրավունք ունի սույն օրենսգրքի 5-րդ բաժնով սահմանված կարգով ու չափերով:

2. Երեխաներին ալիմենտ վճարելու պարտավոր ծնողի պահանջով դատարանը կարող է որոշում կայացնել վճարման ենթակա ալիմենտի գումարի հիսուն տոկոսից ոչ ավելին բանկերում երեխաների անունով բացված հաշվին փոխանցելու մասին:

3. Սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը տնօրինելու երեխայի իրավունքը սահմանվում է քաղաքացիական օրենսդրությամբ:

Ծնողների կողմից երեխայի գույքը կառավարելու լիազորություններն իրականացնելիս նրանց վրա տարածվում են խնամակալի գույքի տնօրինման վերաբերյալ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված նորմերը:

4. Երեխան սեփականության իրավունք չունի ծնողների գույքի նկատմամբ, իսկ ծնողները սեփականության իրավունք չունեն երեխայի գույքի նկատմամբ: Համատեղ ապրող երեխաներն ու ծնողները կարող են մեկը մյուսի գույքը տիրապետել և օգտագործել փոխադարձ համաձայնությամբ:

5. Ծնողների և զավակների՝ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու կարգն ու պայմանները սահմանվում են քաղաքացիական օրենսդրությամբ:

**Հոդված 48. Երեխայի այլ իրավունքներ**

Երեխան ունի օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

**Գ Լ ՈՒ Խ 11.**

**ԾՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Հոդված 49. Ծնողների իրավունքների ու պարտականությունների հավասարությունը**

1. Ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ):

2. Սույն գլխով նախատեսված ծնողական իրավունքները դադարում են երեխաների տասնութ տարեկանը լրանալով, ինչպես նաև սահմանված կարգով երեխաների ամուսնանալու, օրենքով նախատեսված կարգով մինչև չափահաս դառնալը երեխաների կողմից լրիվ գործունակություն ձեռք բերելու դեպքերում:

**Հոդված 50. Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողների իրավունքները**

1. Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն ունեն իրենց երեխայի հետ համատեղ ապրելու և նրա դաստիարակությանը մասնակցելու իրավունքներ:

2. Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներից երեխա ծնվելու դեպքում, ինչպես նաև նրանց մայրությունը և (կամ) հայրությունը որոշելիս ծնողները ամուսնության տարիքը լրանալուց հետո կարող են ինքնուրույն իրականացնել ծնողական իրավունքները:

Մինչև անչափահաս ծնողների ամուսնության տարիքը լրանալը նրանց երեխայի համար կարող է նշանակվել խնամակալ, որը անչափահաս ծնողների հետ համատեղ կիրականացնի այդ երեխայի դաստիարակությունը: Երեխայի խնամակալի և անչափահաս ծնողների միջև առաջացած տարաձայնությունները կարգավորում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

3. Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն իրավունք ունեն ընդհանուր սկզբունքներով ընդունելու կամ վիճարկելու իրենց հայրությունը և մայրությունը:

**Հոդված 51. Երեխաներին դաստիարակելու և կրթություն տալու՝ ծնողների իրավունքներն ու պարտականությունները**

1. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:

Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

2. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների կրթության մասին:

Ծնողները, երեխաների կարծիքը հաշվի առնելով հանդերձ, ունեն կրթական հաստատության և երեխաների ուսուցման ձևի ընտրության իրավունք մինչև երեխաների հիմնական ընդհանուր կրթություն ստանալը:

(51-րդ հոդվածը խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)

**Հոդված 52. Երեխաների իրավունքները և շահերը պաշտպանելու՝ ծնողների իրավունքներն ու պարտականությունները**

Երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը դրվում է նրանց ծնողների վրա:

Ծնողները համարվում են իրենց երեխաների օրինական ներկայացուցիչները և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ առանց լիազորագրի հանդես են գալիս ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ ջանկացած հարաբերություններում, ինչպես նաև դատարանում:

**Հոդված 53. Ծնողական իրավունքների իրականացումը**

1. Ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ:

Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան:

Ծնողական իրավունքներն իրականացնելիս ծնողներն իրավունք չունեն վնաս պատճառելու երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը: Երեխաների դաստիարակության եղանակները պետք է բացառեն ֆիզիկական կամ հոգեբանական բռնությունը որպես դաստիարակության միջոց կիրառելը, ինչպես նաև նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը:

Ծնողական իրավունքներն ի վնաս երեխաների իրավունքների և շահերի իրականացնող ծնողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

2. Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը: Ծնողները (նրանցից մեկը) փոխադարձ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կարող են առկա տարաձայնությունները լուծելու համար դիմել խնամակալության և հոգաբարձության մարմին կամ դատարան:

3. Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

**(53-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 54. Երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացումը**

1. Երեխայից առանձին ապրող ծնողը իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու:

Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը:

2. Ծնողներն իրավունք ունեն գրավոր համաձայնություն կնքելու երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին:

Եթե ծնողները չեն կարող համաձայնության գալ, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ վեճը լուծում է դատարանը:

3. Դատարանի վճիռը չարամտորեն չկատարելու դեպքում երեխայից առանձին ապրող ծնողի պահանջով դատարանը կարող է որոշում կայացնել երեխան նրան հանձնելու մասին՝ ելնելով երեխայի շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը:

4. Երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի իր երեխայի մասին տեղեկատվություն ստանալու դաստիարակչական ու բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից, ինչպես նաև ծնողից, որի մոտ ապրում է երեխան: Տեղեկատվություն տրամադրելը կարող է մերժվել միայն ծնողի կողմից երեխայի կյանքին և առողջությանն սպառնացող վտանգի առկայության դեպքում: Տեղեկատվություն տրամադրելու մերժումը կարող է վիճարկվել դատական կարգով:

**(54-րդ հոդվածը լրաց. 08.02.11 ՀՕ-46-Ն, փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 55. Խորթ երեխաներին դաստիարակելու և խնամելու՝ խորթ ծնողների իրավունքները և պարտականությունները**

**(վերնագիրը փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

Խորթ ծնողները իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակել և խնամել իրենց ամուսնու՝ նախկին ամուսնությունից ծնված և իրենց հետ համատեղ ապրող երեխաներին (խորթ երեխաներին):

**(55-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 56. Պապերի, տատերի, եղբայրների, քույրերի և այլ ազգականների՝ երեխայի հետ շփվելու իրավունքը**

**(վերնագիրը խմբ. 08.02.11 ՀՕ-46-Ն)**

1. Երեխայի պապերը, տատերը, եղբայրները, քույրերը և այլ ազգականներն իրավունք ունեն շփվելու երեխայի հետ:

2. Մերձավոր ազգականների հետ երեխային շփվելու հնարավորություն տալուց ծնողների կամ նրանցից մեկի մերժման դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող է պարտավորեցնել ծնողներին կամ նրանցից մեկին՝ չխանգարելու այդ շփմանը:

3. Եթե ծնողները կամ նրանցից մեկը չեն կատարում խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումը, երեխայի մերձավոր ազգականները կարող են երեխայի հետ շփվելու արգելքները վերացնելու հայցով դիմել դատարան: Դատարանը վեճը լուծում է՝ ելնելով երեխայի շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը:

**(56-րդ հոդվածը խմբ. 08.02.11 ՀՕ-46-Ն, փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 57. Ծնողական իրավունքների պաշտպանությունը**

1. Ծնողները կարող են պահանջել վերադարձնել իրենց երեխային այն անձից, ով նրան իր մոտ է պահում առանց օրինական հիմքի կամ առանց դատարանի որոշման: Վեճի առկայության դեպքում ծնողներն իրենց ծնողական իրավունքները պաշտպանելու համար կարող են դիմել դատարան:

Հաշվի առնելով երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել ծնողների հայցի բավարարումը, եթե հանգի այն եզրակացության, որ ծնողներին վերադարձնելը չի բխում երեխայի շահերից:

2. Եթե դատական կարգով հաստատվում է, որ ո՛չ ծնողները, ո՛չ էլ այն անձը, որի մոտ գտնվում է երեխան, ի վիճակի չեն ապահովելու նրա դաստիարակությունն ու զարգացումը, ապա դատարանը երեխային հանձնում է խնամակալության և հոգաբարձության մարմնի խնամքին:

**(57-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 58. Երեխային վերցնելը նրա կյանքը և առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում**

1. Երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինն իրավասու է անմիջապես երեխային վերցնելու ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան:

2. Երեխային վերցնելիս խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անհապաղ ապահովել երեխայի ժամանակավոր տեղավորումը և յոթ օրվա ժամկետում դիմել դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով:

**Հոդված 59. Ծնողական իրավունքներից զրկելը**

1. Երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք՝

1) մեկ տարի անընդմեջ չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, այդ թվում՝ ալիմենտ վճարելուց.

2) չեն փոխում իրենց վարքագիծը ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում.

3) առանց հարգելի պատճառի հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններից.

4) մեկ տարի առանց հարգելի պատճառի հրաժարվում են վերցնել իրենց երեխային դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ մմանատիպ այլ հաստատություններից.

5) չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, այդ թվում՝ իրենց վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխայի վրա.

6) տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ.

7) տառապում են քրոնիկ հոգեկան հիվանդություններով, որոնց ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

8) դաժանաբար են վարվում երեխայի հետ, մասնավորապես՝

ա. պարբերաբար այնպիսի ֆիզիկական բռնություն են գործադրում նրա նկատմամբ, որը չի պարունակում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի հատկանիշներ,

բ. պարբերաբար հոգեբանական բռնություն են գործադրում նրա նկատմամբ, այն է՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական բռնություն գործադրելու սպառնալիքը, արժանապատվության պարբերական նվաստացումը:

2. Ծնողը զրկվում է ծնողական իրավունքներից, եթե դատապարտվել է իր երեխայի դեմ ուղղված դիտավորյալ հանցագործության համար:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով ամրագրված դեպքերը ծնողական իրավունքներից զրկելու հիմք չեն, եթե ծնողը գտնվում է բժշկական հաստատությունում, կարգապահական գումարտակում, ուղղիչ հիմնարկում, ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում, մասնակցում է վարժական հավաքներին կամ գտնվում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ, մարտական գործողությունների ընթացքում զինված ուժերի կազմում, գերության մեջ, մեկնել է օտարերկրյա գործուղման, եթե ծնողական իրավունքներից զրկելը չի բխում Երեխայի լավագույն շահերից: Դատարանը, որպես հարգելի պատճառ, կարող է դիտարկել նաև այլ իրավիճակներ:

**(59-րդ հոդվածը խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**(59-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը 21.12.17 ՀՕ-10-Ն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ուժի մեջ կմտնի 17.07.2018թ.)**

**Հոդված 60. Ծնողական իրավունքներից զրկելու կարգը**

1. Ծնողական իրավունքներից զրկելը կատարվում է դատական կարգով: Ծնողական իրավունքներից զրկելու մասին հայց կարող է ներկայացնել՝

ա. ծնողներից մեկը (երեխայի այլ օրինական ներկայացուցիչը),

բ. խնամակալության և հոգաբարձության մարմինը,

գ. այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններն ու կազմակերպությունները, որոնց վրա օրենքով դրված են երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանության պարտականություններ.

1.1. Սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» ենթակետերով նախատեսված մարմինները և կազմակերպությունները սույն օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում պարտավոր են ծնողական իրավունքներից զրկելու մասին հայց ներկայացնել դատարան ոչ ուշ, քան 59-րդ

հողվածով սահմանված հիմքերն իրենց հայտնի դառնալու օրվանից մեկ ամիս հետո:

2. Ծնողական իրավունքներից զրկելու մասին գործերը քննվում են խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ:

2.1. Ծնողական իրավունքներից զրկելու մասին գործերը քննելիս հաշվի է առնվում սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի կողմից խնամակալության և հոգաբարձության մարմիններին տրամադրված երեխայի և ծնողի սոցիալական կարիքների գնահատման մասին եզրակացությունը (դիրքորոշումը):

3. Եթե դատարանը ծնողական իրավունքներից զրկելու գործը քննելիս ծնողների կամ նրանցից մեկի գործողություններում հայտնաբերում է քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ, ապա այդ մասին պարտավոր է տեղեկացնել համապատասխան իրավասու մարմիններին:

4. Ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում դատարանը պարտավոր է այդ վճիռն քաղվածքն ուղարկել երեխայի ծննդի պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

**(60-րդ հոդվածը խմբ., լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

#### **Հոդված 61. Ծնողական իրավունքներից զրկելու հետևանքները**

1. Ծնողական իրավունքներից զրկված ծնողները կորցնում են այն երեխայի հետ ազգակցության փաստի վրա հիմնված բոլոր իրավունքները, որի նկատմամբ ծնողական իրավունքներից նրանք զրկվել են (ընդ որում՝ նրանցից ապրուստի միջոց ստանալու, ինչպես նաև երեխաներ ունեցող քաղաքացիների համար սահմանված արտոնությունների ու պետական նպաստների իրավունքները):

2. Ծնողական իրավունքներից զրկելը ծնողներին չի ազատում իրենց երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից:

3. Երեխայի և ծնողական իրավունքներից զրկված ծնողների կամ նրանցից մեկի հետագայում համատեղ ապրելու մասին հարցը լուծվում է դատական կարգով:

4. Ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու դեպքում երեխան պահպանում է բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իր իրավունքը, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝ բնակարանային օրենսդրությանը համապատասխան՝ բնակելի տարածություն ստանալու իրավունքը, ինչպես նաև ծնողների և այլ ազգականների հետ ազգակցականության կապի վրա հիմնված գույքային իրավունքները (ընդ որում՝ ժառանգություն ստանալու իրավունքը):

5. Եթե անհնարին է երեխային հանձնել մյուս ծնողին, կամ երկու ծնողներն էլ ծնողական իրավունքներից զրկվել են, ապա նա հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի խնամքին:

6. Ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու դեպքում երեխային որդեգրել թույլատրվում է ոչ շուտ, քան ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից վեց ամիս հետո:

#### **Հոդված 62. Ծնողական իրավունքների վերականգնումը**

1. Ծնողական իրավունքները կարող են վերականգնվել, եթե ծնողները կամ նրանցից մեկը փոխել են իրենց վարքագիծը, կենսաձևը և (կամ) երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը:

2. Ծնողական իրավունքները վերականգնվում են դատական կարգով՝ ծնողական իրավունքներից զրկված ծնողի դիմումի հիման վրա: Ծնողական իրավունքների վերականգնման մասին գործերը քննվում են խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ:

3. Ծնողական իրավունքների վերականգնման մասին դիմումի հետ միաժամանակ կարող է քննության առնվել նաև երեխային ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելու մասին պահանջը:

4. Երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների վերականգնումը կատարվում է՝ հաշվի առնելով նրա կարծիքը:

Դատարանը, հաշվի առնելով երեխայի կարծիքը, իրավունք ունի մերժելու ծնողական իրավունքների վերականգնման հայցը, եթե ծնողական իրավունքների վերականգնումը հակասում է երեխայի շահերին:

Ծնողական իրավունքների վերականգնում չի թույլատրվում, եթե երեխան որդեգրված է, և որդեգրումը սահմանված կարգով չի վերացվել:

**(62-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

#### **Հոդված 63. Ծնողական իրավունքների սահմանափակումը**

1. Ելնելով երեխայի կենսական շահերից՝ դատարանը կարող է վճիռ կայացնել ծնողներից (ծնողներից մեկից) երեխային վերցնելու մասին (ծնողական իրավունքների սահմանափակում)՝ առանց ծնողական իրավունքներից զրկելու:

2. Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը նրա համար վտանգավոր է ծնողներից կամ նրանցից մեկից անկախ հանգամանքներից (հոգեկան կամ այլ քրոնիկ հիվանդություն, ծանր հանգամանքների առկայություն և այլն):

Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար: Եթե

ծնողները կամ նրանցից մեկը չփոխեն իրենց վարքագիծը, խնամակալության և հոգաբարձության մարմինը ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո պարտավոր է հայց ներկայացնել ծնողական իրավունքներից զրկելու մասին: Խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող է ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու մասին հայց ներկայացնել մինչև այդ ժամկետը լրանալը՝ ելնելով երեխայի շահերից:

3. Ծնողական իրավունքների սահմանափակման մասին հայց կարող են ներկայացնել երեխայի ծնողը, մերձավոր ազգականը, երեխայի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը, ինչպես նաև այն մարմիններն ու կազմակերպությունները, որոնց վրա օրենքով դրված է երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանության պարտականություն:

4. Ծնողական իրավունքների սահմանափակման մասին գործերը քննվում են խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ:

5. Ծնողների կամ նրանցից մեկի ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում դատարանը պարտավոր է վճռի քաղվածքն ուղարկել երեխայի ծննդի պետական գրանցման քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող և երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմիններ:

**(63-րդ հոդվածը լրաց., խմբ., փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 64. Ծնողական իրավունքների սահմանափակման հետևանքները**

1. Ծնողները, որոնց ծնողական իրավունքները սահմանված կարգով սահմանափակվել են, կորցնում են երեխային անձամբ դաստիարակելու իրավունքը, ինչպես նաև երեխաներ ունեցող քաղաքացիների համար սահմանված արտոնություններ ու պետական նպաստներ ստանալու իրավունքը:

2. Ծնողական իրավունքների սահմանափակումը ծնողներին չի ազատում երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից:

3. Ծնողների կամ նրանցից մեկի ծնողական իրավունքների սահմանափակման դեպքում երեխան պահպանում է բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իր իրավունքը, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝ բնակարանային օրենսդրությանը համապատասխան՝ բնակելի տարածություն ստանալու իրավունքը, ինչպես նաև ծնողների և այլ ազգականների հետ ազգակցականության կապի վրա հիմնված գույքային իրավունքները (ընդ որում՝ ժառանգություն ստանալու իրավունքը):

4. Ծնողների ծնողական իրավունքների սահմանափակման դեպքում երեխան հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների խնամքին:

**Հոդված 65. Երեխայի չփունը ծնողական սահմանափակ իրավունքներով ծնողների հետ**

Ծնողներին, որոնց ծնողական իրավունքները սահմանված կարգով սահմանափակվել են, կարող է թույլատրվել կապ ունենալ երեխայի հետ, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա: Երեխայի հետ ծնողների չփունը թույլատրվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի, խնամատար ծնողների կամ երեխայի խնամակալի (հոգաբարձուի) կամ այն կազմակերպության ղեկավարի կամ նրան փոխարինողի համաձայնությամբ, որտեղ գտնվում է երեխան:

**Հոդված 66. Ծնողական իրավունքների սահմանափակման վերացումը**

1. Եթե վերացել են այն հանգամանքները, որոնց հիման վրա սահմանափակվել են ծնողների կամ նրանցից մեկի ծնողական իրավունքները, ապա դատարանը ծնողների կամ նրանցից մեկի հայցի հիման վրա կարող է վճիռ կայացնել երեխային իր ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելու և սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները վերացնելու մասին:

2. Հաշվի առնելով երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել հայցի բավարարումը, եթե երեխային իր ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելը հակասում է նրա շահերին:

**(66-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 67. Խնամակալության և հոգաբարձության մարմնի մասնակցությունը երեխաների խնամքի նպաստիարակության հետ կապված վեճերը դատարանի կողմից քննելիս**

**(վերնագիրը լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

1. Դատարանը երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված վեճերը քննելիս գործին պետք է մասնակից դարձնի խնամակալության և հոգաբարձության մարմնին, անկախ նրանից, թե ով է ներկայացրել երեխայի պաշտպանության մասին հայց:

2. Խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն, որը (որոնք) հավակնում է (են) երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը, իսկ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դեպքում՝ նաև սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի կողմից խնամակալության և հոգաբարձության մարմիններին տրված եզրակացությունը երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու մասին:

**(67-րդ հոդվածը լրաց., խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**



## Բ Ա Ժ Ի Ն V

### ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱԼԻՍԵՆՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Գ Լ ՈՒ Խ 12.

#### **ԾՆՈՂՆԵՐԻ ՈՒ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԱԼԻՍԵՆՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

##### **Հոդված 68. Երեխաների ապրուստը հոգալու՝ ծնողների պարտականությունները**

1. Ծնողները պարտավոր են պահել իրենց երեխաներին:

Երեխաներին ապրուստի միջոց տրամադրելու կարգն ու պայմանները ծնողները որոշում են ինքնուրույն: Ծնողները կարող են համաձայնություն կնքել իրենց երեխաներին պահելու մասին (ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն)՝ սույն օրենսգրքի 15-րդ գլխին համապատասխան:

2. Եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական կարգով:

##### **Հոդված 69. Երեխաների համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը**

1. Երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում ծնողներից ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով՝ հետևյալ չափերով ամենամսյա վճարումներ կատարելու միջոցով՝

ա) մեկ երեխայի համար ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի մեկ քառորդը.

բ) երկու երեխաների համար՝ մեկ երրորդը.

գ) երեք և ավելի երեխաների համար՝ կեսը:

Սույն մասով նախատեսված ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար չպետք է պակաս լինի սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափից, իսկ գործազրկության նպաստ ստացող ծնողներից ալիմենտ բռնագանձելիս՝ գործազրկության նպաստի 20 տոկոսից:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բաժինների չափերը կարող են դատարանով նվազեցվել կամ ավելացվել՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը:

*(69-րդ հոդվածը խմբ. 17.03.10 ՀՕ-31-Ն)*

##### **Հոդված 70. Ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի տեսակներ, որոնցից ալիմենտներ է պահվում երեխաների համար**

Ծնողների՝ հայկական դրամով կամ արտարժույթով ձեռք բերված վաստակը և (կամ) այլ եկամտի տեսակները, որոնցից, սույն օրենսգրքի 69-րդ հոդվածին համապատասխան, ալիմենտ է պահվում հոգուտ երեխաների, որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

##### **Հոդված 71. Երեխաների համար ալիմենտի բռնագանձումը կայուն դրամական գումարով**

1. Ծնողների միջև երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում դատարանն իրավունք ունի բռնագանձվող ալիմենտի ամենամսյա չափը սահմանելու կայուն դրամական գումարով կամ միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով, և՛ բաժիններով:

Սույն մասի առաջին պարբերության նորմերը կիրառվում են, եթե այդ ծնողների վաստակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնար կամ դժվար է կամ էլ էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին, ինչպես նաև այն դեպքերում, երբ երեխաների համար ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը՝

ա) ստանում է ոչ կանոնավոր կամ փոփոխվող վաստակ և (կամ) այլ եկամուտ.

բ) վաստակ և (կամ) այլ եկամուտ է ստանում բնամթերքի տեսքով կամ արտարժույթով.

գ) վաստակ և (կամ) այլ եկամուտ չի ստանում կամ չունի:

2. Կայուն դրամական գումարի չափը որոշում է դատարանը՝ ելնելով երեխայի նախկին կենսաապահովման մակարդակի առավելագույն պահպանման հնարավորությունից՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը:

3. Եթե ծնողներից յուրաքանչյուրի մոտ երեխաներ են մնում, ավելի պակաս ապահովված ծնողի հետ բնակվող երեխայի օգտին մյուս ծնողից բռնագանձվելիք ալիմենտի չափը դատարանը որոշում է սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ամենամսյա բռնագանձման ենթակա կայուն դրամական գումարով:

*(71-րդ հոդվածը փոփ. 08.02.11 ՀՕ-46-Ն)*

##### **Հոդված 72. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ալիմենտի բռնագանձումը և օգտագործումը**

1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ալիմենտը բռնագանձվում է սույն օրենսգրքի 69-71-րդ հոդվածներին համապատասխան և վճարվում է երեխաների խնամակալին (հոգաբարձուին):

2. Առանց ծնողական խնամքի մնացած և դատարանական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ մանատիպ այլ կազմակերպություններում գտնվող երեխաների համար ծնողներից բռնագանձվող ալիմենտները փոխանցվում են այդ կազմակերպությունների հաշվին, որտեղ դրանք հաշվառվում են յուրաքանչյուր երեխայի համար առանձին:

Նշված կազմակերպությունները կարող են այդ գումարները պահել բանկում: Ալիմենտի գումարի շրջանառությունից ստացված եկամտի հիսուն տոկոսը օգտագործվում է նշված կազմակերպություններում երեխաներին պահելու համար: Կազմակերպությունը, երբ երեխան թողնում է այն, նրա անունով ստացված ալիմենտի գումարը և այդ գումարի շրջանառությունից ստացված եկամտի հիսուն տոկոսը փոխանցվում է երեխայի անվամբ բացված բանկային հաշվին:

**(72-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 73. Անաշխատունակ չափահաս զավակների ալիմենտի իրավունքը**

1. Ծնողները պարտավոր են ապրուստի միջոցներ տրամադրել իրենց օգնության կարիքն ունեցող անաշխատունակ չափահաս զավակներին:

2. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում անաշխատունակ չափահաս զավակների համար ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է դատարանը: Պա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս՝ ելնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից:

**Հոդված 74. Ծնողների մասնակցությունը երեխաների համար կատարվող լրացուցիչ ծախսերին**

1. Համաձայնության բացակայության և բացառիկ հանգամանքների առկայության (ծանր հիվանդություն, երեխաների կամ անաշխատունակ չափահաս անապահով զավակների խեղում, նրանց նկատմամբ հատուկ խնամքի համար վճարելու անհրաժեշտություն և այլն) դեպքում ծնողներից յուրաքանչյուրը կարող է դատարանի վճռով ներգրավվել այդ հանգամանքներից բխող լրացուցիչ ծախսեր կրելու գործին:

Լրացուցիչ ծախսերը կրելու ծնողների մասնակցության կարգը և այդ ծախսերի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է դատարանը՝ ելնելով ծնողների և զավակների գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից: Պա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս:

2. Պատարանը կարող է պարտավորեցնել ծնողներին՝ մասնակցելու ինչպես փաստացի կատարվող լրացուցիչ ծախսերին, այնպես էլ ապագայում կատարվելիք անհրաժեշտ լրացուցիչ ծախսերին:

**Հոդված 75. Ծնողների ապրուստը հոգալու՝ չափահաս զավակների պարտականությունները**

1. Աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին և հոգ տանել նրանց մասին:

2. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում օգնության կարիք ունեցող ծնողների համար նրանց չափահաս աշխատունակ զավակներից ալիմենտը բռնագանձվում է դատական կարգով:

3. Ջավակներից յուրաքանչյուրից բռնագանձվող ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է դատարանը՝ ելնելով ծնողների և զավակների գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից: Պա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս:

4. Չափահաս զավակներից յուրաքանչյուրի առնչությամբ ալիմենտի չափը որոշելիս դատարանը կարող է հաշվի առնել տվյալ ծնողի չափահաս աշխատունակ բոլոր զավակներին, անկախ նրանից, թե պահանջը ներկայացվել է նրանցից մեկի, մի քանիսի, թե բոլորի դեմ:

5. Ջավակները կարող են ազատվել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողների ապրուստը հոգալու պարտականությունից, եթե դատարանի վճռով կհաստատվի, որ ծնողները ժամանակին խուսափել են իրենց ծնողական պարտականությունները կատարելուց:

Ջավակներն ազատվում են ծնողական իրավունքներից զրկված ծնողներին ալիմենտ վճարելու պարտականությունից:

**Հոդված 76. Չափահաս աշխատունակ զավակների մասնակցությունը անաշխատունակ ծնողների նկատմամբ կատարվող լրացուցիչ ծախսերին**

1. Անաշխատունակ ծնողների հանդեպ չափահաս աշխատունակ զավակների կողմից հոգատարության բացակայության և բացառիկ հանգամանքների (ծնողի ծանր հիվանդություն, խեղում ստանալ, նրանց կողմնակի խնամքի համար վճարելու անհրաժեշտություն և այլն) առկայության դեպքում նրանք կարող են դատարանի վճռով մասնակից դարձվել այդ հանգամանքներից բխող լրացուցիչ ծախսերը կրելու գործին:

2. Չափահաս աշխատունակ զավակներից յուրաքանչյուրի կողմից լրացուցիչ ծախսերը կրելու կարգը և այդ ծախսերի չափը որոշում է դատարանը՝ հաշվի առնելով ծնողների և զավակների գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը, պահպանելով սույն օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-5-րդ մասերի պահանջները:

3. Լրացուցիչ ծախսերը կրելու կարգը և այդ ծախսերի չափը կարող են որոշվել կողմերի համաձայնությամբ:

**Հոդված 77. Ամուսինների՝ միմյանց ապրուստի միջոցները հոգալու պարտականությունները**

Ամուսինները պարտավոր են նյութապես օժանդակել միմյանց:

Այդպիսի օժանդակությունը մերժվելու և ալիմենտ վճարելու վերաբերյալ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դրա համար անհրաժեշտ միջոցներ ունեցող մյուս ամուսնուց դատական կարգով ալիմենտ պահանջելու իրավունք ունի՝

ա) անաշխատունակ անապահով ամուսինը.

բ) կինը՝ հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը.

գ) անապահով ամուսինը, որ խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ չափահաս զավակին:

**Հոդված 78. Ամուսնալուծությունից հետո նախկին ամուսնուց ալիմենտ ստանալու իրավունքը**

1. Նախկին ամուսնուց, որը նյութական բավարար միջոցներ ունի, դատական կարգով ալիմենտի պահանջի իրավունք ունի՝

ա) նախկին կինը՝ հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը.

բ) անապահով նախկին ամուսինը, որը խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ զավակին.

գ) անաշխատունակ անապահով նախկին ամուսինը, որը հաշմանդամ է դարձել մինչև ամուսնալուծվելը կամ ամուսնալուծվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում.

դ) անապահով ամուսինը, որը կենսաթոշակային տարիքի է հասել ամուսնալուծության պահից սկսած հինգ տարում, եթե ամուսինները տասնհինգ և ավելի տարի գտնվել են ամուսնության մեջ:

2. Ալիմենտի չափը և ամուսնալուծությունից հետո նախկին ամուսնուն դա տրամադրելու կարգը կարող է որոշվել նախկին ամուսինների համաձայնությամբ:

**Հոդված 79. Ամուսիններից և նախկին ամուսիններից դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը**

Ամուսինների (նախկին ամուսինների) միջև ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում ամուսնուց (նախկին ամուսնուց) դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է դատարանը՝ ելնելով ամուսինների (նախկին ամուսինների) գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից: Դա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս:

**Հոդված 80. Մյուս ամուսնուն պահելու պարտականությունից ազատելը կամ այդ պարտականությունը որոշակի ժամանակով սահմանափակելը**

Դատարանը կարող է ամուսնուն ազատել մյուս անաշխատունակ անապահով ամուսնուն օգնություն ցույց տալու պարտականությունից կամ սահմանափակել այդ պարտականությունը որոշակի ժամանակով ինչպես ամուսնության ընթացքում, այնպես էլ ամուսնալուծությունից հետո, եթե օգնության կարիք ունեցող ամուսնու անաշխատունակությունը վրա է հասել՝

ա) ոգելից խմիչքի, թմրամիջոցի և (կամ) թունամիջոցի չարաշահման կամ նրա կողմից դիտավորյալ հանցագործություն կատարելու հետևանքով.

բ) ամուսինների՝ միմյանց հետ ամուսնության մեջ գտնվելու՝ մեկ տարուց ոչ ավելի ժամանակահատվածում.

գ) ալիմենտի վճարում պահանջող ամուսնու՝ ընտանիքում հակաբարոյական վարքագիծ (ամուսնական դավաճանություն, մոլախաղերով զբաղվել և այլն) ցուցաբերելու հետևանքով:

**Գ Լ ՈՒ Խ 14.**

***ՇՆՏՆԱԻՔԻ ՄՅՈՒՄ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱԼԻՄԵՆՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

**Հոդված 81. Իրենց անչափահաս կամ անաշխատունակ չափահաս եղբայրներին և քույրերին պահելու՝ եղբայրների և քույրերի պարտականությունը**

Օգնության կարիք ունեցող անչափահաս եղբայրներն ու քույրերը իրենց ծնողներից ապրուստի միջոց ստանալու անհնարինության դեպքում բավարար միջոցներ ունեցող իրենց չափահաս աշխատունակ եղբայրներից ու քույրերից դատական կարգով ալիմենտ ստանալու իրավունք ունեն: Նույնպիսի իրավունք տրվում է նաև օգնության կարիք ունեցող չափահաս անաշխատունակ եղբայրներին ու քույրերին, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից, ամուսնուց (նախկին ամուսնուց) կամ ծնողներից:

**Հոդված 82. Թոռներին պահելու՝ պապերի և տատերի պարտականությունը**

Օգնության կարիք ունեցող անչափահաս թոռներն իրենց ծնողներից ապրուստի միջոց ստանալու անհնարինության դեպքում անհրաժեշտ միջոցներ ունեցող իրենց պապերից ու տատերից դատական կարգով ալիմենտ ստանալու իրավունք ունեն: Նույնպիսի իրավունք տրվում է օգնության կարիք ունեցող չափահաս անաշխատունակ թոռներին, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց ամուսիններից (նախկին ամուսիններից) կամ ծնողներից:

**Հոդված 83. Պապերին և տատերին պահելու՝ թռռների պարտականությունը**

Օգնության կարիք ունեցող անաշխատունակ պապերը և տատերն իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ ամուսնուց (նախկին ամուսնուց) ապրուստի միջոց ստանալու անհնարինության դեպքում անհրաժեշտ միջոցներ ունեցող իրենց չափահաս աշխատունակ թռռներից դատական կարգով ալիմենտ ստանալու իրավունք ունեն:

**Հոդված 84. Իրենց փաստացի խնամողներին պահելու՝ երեխաների պարտականությունը**

1. Անաշխատունակ անապահով անձինք, ովքեր իրականացրել են երեխաների փաստացի խնամքը, դատական կարգով իրենց չափահաս գործունակ երեխաներից ապրուստի միջոց պահանջելու իրավունք ունեն, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ ամուսնուց (նախկին ամուսնուց):

2. Դատարանը կարող է երեխաներին ազատել փաստացի խնամողներին ապրուստի միջոց տրամադրելուց, եթե փաստացի խնամողները նրանց խնամել ու դաստիարակել են հինգ տարուց պակաս ժամկետով, ինչպես նաև, եթե նրանք այդ երեխաներին խնամել ու դաստիարակել են ոչ պատշաճ ձևով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պարտականությունները չեն դրվում խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող անձանց, ինչպես նաև խնամատար ընտանիքներում դաստիարակություն ստացած անձանց վրա:

**Հոդված 85. Խորթ հորը և խորթ մորը պահելու՝ խորթ զավակների պարտականությունը**

1. Օգնության կարիք ունեցող անաշխատունակ խորթ հայրը և խորթ մայրը, որ դաստիարակել ու պահել են իրենց խորթ զավակներին, իրավունք ունեն դրա համար անհրաժեշտ բավարար միջոցներ ունեցող չափահաս աշխատունակ խորթ զավակներից դատական կարգով պահանջելու ապրուստի միջոց, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ ամուսիններից (նախկին ամուսիններից):

2. Դատարանը կարող է խորթ զավակներին ազատել խորթ հորն ու խորթ մորը պահելու պարտականությունից, եթե վերջիններս հինգ տարուց պակաս են դաստիարակել կամ խնամել նրանց, ինչպես նաև, եթե նրանք պատշաճ ձևով չեն կատարել խորթ զավակներին պահելու և դաստիարակելու իրենց պարտականությունները:

**Հոդված 86. Ընտանիքի այլ անդամների օգտին դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը**

1. Սույն օրենսգրքի 81-85-րդ հոդվածներում նշված անձանց օգտին բռնագանձվող ալիմենտի չափը և վճարելու կարգը կարող են որոշվել կողմերի համաձայնությամբ:

2. Կողմերի համաձայնության բացակայության պարագայում դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով, յուրաքանչյուր դեպքում սահմանում է դատարանը՝ ելնելով ալիմենտ վճարողի և ստացողի գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից: Դա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս:

3. Եթե ընտանիքի՝ ալիմենտ պահանջող անդամին խնամել պարտավոր են միաժամանակ մի քանի անձինք, դատարանը, կախված նրանց գույքային ու ընտանեկան դրությունից, որոշում է ալիմենտային պարտականությունների կատարման մեջ նրանցից յուրաքանչյուրի մասնակցության չափը: Ալիմենտի չափը որոշելիս դատարանն իրավունք ունի հաշվի առնելու ալիմենտ վճարելու պարտավոր բոլոր անձանց, անկախ նրանից՝ հայրը ներկայացվել է նրանցից մեկի, մի քանիսի, թե բոլորի դեմ:

**Գ Լ ՈՒ Խ 15.**

**ԱԼԻՄԵՆՏ ՎՃԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Հոդված 87. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության կնքումը**

Ալիմենտ վճարելու վերաբերյալ (ալիմենտի չափի, վճարման պայմանների ու կարգի մասին) համաձայնությունը կնքվում է ալիմենտ վճարելու պարտավոր անձի և խնամակալի (ալիմենտ ստացողի) միջև, իսկ ալիմենտ վճարելու պարտավորություն ունեցող անձի և (կամ) ալիմենտ ստացողի անգործունակ լինելու դեպքում՝ այդ անձանց օրինական ներկայացուցիչների միջև: Սահմանափակ գործունակ անձինք ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն են կնքում իրենց օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ:

*(87-րդ հոդվածը լրաց. 08.02.11 ՀՕ-46-Ն)*

**Հոդված 88. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության ձևը**

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր և ենթակա է նոտարական վավերացման:

**Հոդված 89. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն կնքելու, կատարելու, փոփոխելու, լուծելու և անվավեր ճանաչելու կարգը**

1. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն կնքելու, կատարելու, փոփոխելու, լուծելու և անվավեր ճանաչելու նկատմամբ կիրառվում են քաղաքացիաիրավական գործարքների կնքման, կատարման, փոփոխման, լուծման և անվավեր ճանաչման վերաբերյալ քաղաքացիական օրենսդրության նորմերը:

2. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը ցանկացած ժամանակ կարող է փոփոխվել կամ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը փոփոխելու կամ լուծելու ձևը պետք է համապատասխանի այն կնքելու ձևին:

3. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը միակողմանիորեն փոփոխել կամ լուծել չի թույլատրվում:

4. Կողմերի գույքային և ընտանեկան դրության էական փոփոխությունների, ինչպես նաև ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության փոփոխման կամ լուծման վերաբերյալ անհամաձայնության դեպքում շահագրգիռ կողմն այդ համաձայնության փոփոխման կամ լուծման հայցով դատարան դիմելու իրավունք ունի: Ալիմենտ վճարելու համաձայնության փոփոխման կամ լուծման հարցը որոշելիս դատարանը կարող է հաշվի առնել կողմերի՝ ուշադրության արժանի ցանկացած շահ:

**Հոդված 90. Ալիմենտ վճարելու վերաբերյալ ալիմենտ ստացողի շահերը ոտնահարող համաձայնությունն անվավեր ճանաչելը**

Եթե երեխային կամ ընտանիքի չափահաս անգործունակ անդամին ապրուստի միջոց տրամադրելու՝ ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ նախատեսված պայմանները էապես ոտնահարում են նրանց շահերը (մասնավորապես, սույն օրենսգրքի 91-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները չպահպանելու դեպքում), ապա նման համաձայնությունը դատական կարգով կարող է անվավեր ճանաչվել երեխայի կամ ընտանիքի չափահաս անգործունակ անդամի օրինական ներկայացուցչի, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմնի պահանջով:

**Հոդված 91. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ վճարվող ալիմենտի չափը**

1. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ վճարվող ալիմենտի չափը որոշում են կողմերը:

2. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ երեխաների համար որոշվող ալիմենտի չափը չի կարող պակաս լինել նրանց համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափից:

**Հոդված 92. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ ալիմենտ վճարելու ձևերն ու կարգը**

1. Ալիմենտ վճարելու ձևերն ու կարգը որոշվում է ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ:

2. Ալիմենտը կարող է վճարվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի վաստակի և (կամ) այլ եկամտի նկատմամբ բաժնային չափով, պարբերաբար վճարվող կայուն դրամական գումարով, միանվագ վճարվող կայուն դրամական գումարով, գույք տրամադրելու միջոցով, ինչպես նաև այլ ձևերով, որոնց համար համաձայնություն է կայացվել:

3. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության մեջ կարող է նախատեսվել ալիմենտ վճարելու տարբեր ձևերի համակցում:

**Հոդված 93. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ վճարվող ալիմենտի չափի ինդեքսավորումը**

Վճարվող ալիմենտի չափի ինդեքսավորում կատարվում է ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությանը համապատասխան: Եթե ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության մեջ նախատեսված չէ ինդեքսավորման կարգը, ապա ինդեքսավորումը կատարվում է սույն օրենսգրքի 105-րդ հոդվածին համապատասխան:

**Գ Լ ՈՒ Խ 16.**

**ԱԼԻՄԵՆՏԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ**

**Հոդված 94. Ալիմենտի բռնագանձումը դատարանի վճռով**

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում սույն օրենսգրքի 68-86-րդ հոդվածներում նշված ընտանիքի անդամները կարող են ալիմենտ բռնագանձելու պահանջով դիմել դատարան:

**Հոդված 95. Ալիմենտ ստանալու համար դիմելու ժամկետները**

1. Ալիմենտ ստանալու իրավունք ունեցող անձը կարող է ալիմենտի բռնագանձման համար դիմել դատարան՝ անկախ ալիմենտի իրավունքի առաջացման պահից անցած ժամանակահատվածից, եթե ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ նախկինում ալիմենտ չի վճարվել:

2. Ալիմենտ հատկացվում է դատարան դիմելու պահից: Անցած ժամանակահատվածի համար ալիմենտ կարող է բռնագանձվել դատարան դիմելու պահին նախորդող երեք տարվա համար, եթե դատարանով հաստատվել է, որ մինչև դատարան դիմելը միջոցներ են ձեռնարկվել ապրուստի միջոց ստանալու համար, բայց ալիմենտը չի ստացվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու հետևանքով:

**Հոդված 96. Ալիմենտի բռնագանձումը մինչև դատարանի կողմից վեճի լուծումը**

1. Ալիմենտ բռնագանձելու գործով դատարանը կարող է ալիմենտ բռնագանձելու որոշում կայացնել մինչև ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, իսկ երեխաների համար ալիմենտ բռնագանձելիս՝ մինչև ալիմենտ բռնագանձելու մասին վճիռ կայացնելը:

2. Բռնագանձվող ալիմենտի չափը որոշում է դատարանը՝ ելնելով կողմերի գույքային և ընտանեկան դրությունից: Երեխաների համար բռնագանձվող ալիմենտի չափը որոշվում է սույն օրենսգրքի 69-րդ հոդվածին համապատասխան:

**Հոդված 97. Ալիմենտ պահող կազմակերպության վարչակազմի պարտականությունը**

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության կամ կատարողական թերթի հիման վրա ալիմենտ վճարելու պարտավոր անձի աշխատավայրի (կազմակերպության) վարչակազմը պարտավոր է յուրաքանչյուր ամիս ալիմենտ պահել այդ անձի աշխատավարձից և (կամ) այլ եկամտից և վճարել կամ դրանք փոխանցել ալիմենտ ստացողին՝ ալիմենտ վճարելու պարտավոր անձին աշխատավարձի և (կամ) այլ եկամտի վճարման պահից ոչ ուշ եռօրյա ժամկետում:

**Հոդված 98. Ալիմենտի պահումը ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության հիման վրա**

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության հիման վրա ալիմենտի պահում կարող է կատարվել նաև այն դեպքում, եթե նման համաձայնության կամ կատարողական թերթի հիման վրա պահումների ընդհանուր գումարը գերազանցում է ալիմենտ վճարելու պարտավոր անձի վաստակի և (կամ) այլ եկամտի հիսուն տոկոսը:

**Հոդված 99. Ալիմենտ վճարելու պարտավոր անձի՝ աշխատանքի վայրը փոխելու մասին հաղորդելու պարտականությունը**

1. Դատարանի վճռի կամ ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության հիման վրա ալիմենտի պահում կատարող կազմակերպության վարչակազմը պարտավոր է եռօրյա ժամկետում ալիմենտ բռնագանձելու մասին վճռի կատարման վայրի դատական ակտերի հարկադիր կատարողին և ալիմենտ ստացողին հաղորդել ալիմենտ վճարելու պարտավոր անձի աշխատանքից ազատվելու, ինչպես նաև նրա աշխատանքի նոր վայրի կամ բնակության վայրի մասին, եթե դրանք իրեն հայտնի են:

2. Ալիմենտ վճարելու պարտավոր անձը պետք է սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետում դատական ակտերի հարկադիր կատարողին և ալիմենտ ստացողին հաղորդի աշխատանքի վայրի կամ բնակության վայրի փոփոխման մասին, իսկ երեխաներին ալիմենտ վճարելիս՝ նաև լրացուցիչ վաստակ և (կամ) այլ եկամուտ ունենալու մասին:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկություններն անհարգելի պատճառով չհաղորդելու դեպքում դրանում մեղավոր անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 100. Ալիմենտ վճարելու պարտավոր անձի գույքի նկատմամբ բռնագանձում տարածելը**

1. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ կամ դատարանի վճռով սահմանված չափով ալիմենտի բռնագանձումը, ինչպես նաև ալիմենտային պարտքի բռնագանձումը կատարվում է ալիմենտ վճարելու պարտավոր անձի վաստակից և (կամ) այլ եկամտից: Վաստակի և (կամ) այլ եկամտի անբավարարության դեպքում ալիմենտ պահվում է ալիմենտ վճարելու պարտավոր անձի՝ բանկերում կամ այլ վարկային կազմակերպություններում գտնվող դրամական միջոցներից, ինչպես նաև առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին պայմանագրերով հանձնված դրամական միջոցներից, բացի այն պայմանագրերից, որոնք առաջացնում են սեփականության իրավունքի փոխանցում: Այդ միջոցների անբավարարության դեպքում բռնագանձում տարածվում է ալիմենտ վճարելու պարտավոր անձի ցանկացած այն գույքի վրա, որի վրա օրենքով կարող է բռնագանձում տարածվել:

2. Ալիմենտ վճարելու պարտավոր անձի բանկային հաշիվներում գտնվող դրամական միջոցների և նրա այլ գույքի վրա բռնագանձում տարածելը կատարվում է քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հոդված 101. Ալիմենտային պարտքի որոշումը**

1. Անցած ժամանակի համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության կամ կատարողական թերթի հիման վրա ալիմենտի բռնագանձում կատարվում է ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը կամ կատարողական թերթը ներկայացնելուն նախորդած եռամյա ժամկետի ընթացքում:

2. Եթե կատարողական թերթի կամ ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության հիման վրա ալիմենտի պահում չի կատարվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով, ապա ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով ողջ ժամանակահատվածի համար՝ անկախ սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված եռամյա ժամկետից:

3. Ալիմենտային պարտքի չափը որոշում է դատական ակտերի հարկադիր կատարողը՝ ելնելով դատարանի վճռով որոշված ալիմենտի չափից:

4. Երեխաների համար սույն օրենսգրքի 69-րդ հոդվածին համապատասխան վճարվող ալիմենտային պարտքի չափը որոշվում է՝ ելնելով ալիմենտ վճարելու պարտավոր անձի վաստակից և (կամ) այլ եկամտից այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում ալիմենտի բռնագանձում չի կատարվել: Եթե ալիմենտ վճարելու պարտավոր անձն այդ ժամանակահատվածում չի աշխատել, կամ եթե չներկայացվեն նրա վաստակը և (կամ) այլ եկամուտը հաստատող փաստաթղթեր, ալիմենտային պարտքը որոշվում է՝ ելնելով դրա բռնագանձման պահին Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի չափից: Եթե ալիմենտային պարտքի չափի նման որոշումը էապես խախտում է կողմերից մեկի շահերը, ապա կողմը, որի շահերը խախտվել են, կարող է դիմել դատարան: Դատարանը, ելնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից, որոշում է ալիմենտային պարտքը՝ կայուն դրամական գումարով:

**Հոդված 102. Ալիմենտային պարտքը վճարելուց ազատելը**

1. Կողմերի համաձայնության հիման վրա ալիմենտ վճարելու դեպքում ալիմենտային պարտքը վճարելուց ազատելը կամ պակասեցնելը հնարավոր է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ երեխաների համար ալիմենտ վճարելու դեպքերի:

2. Դատարանը կարող է ալիմենտ վճարելու պարտավոր անձի հայցով նրան լրիվ կամ մասամբ ազատել ալիմենտային պարտքը վճարելուց, եթե կիսատատի, որ ալիմենտ չվճարելը եղել է այդ անձի հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով, և նրա գույքային ու ընտանեկան դրությունը հնարավորություն չի տալիս մարելու կուտակված ալիմենտային պարտքը:

**Հոդված 103. Պատասխանատվություն ալիմենտը ժամանակին չվճարելու համար**

1. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով պարտք առաջանալիս մեղավոր անձը պատասխանատվություն է կրում այդ համաձայնությամբ նախատեսված կարգով:

2. Դատարանի վճռով ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով պարտք առաջանալիս մեղավոր անձը ալիմենտ ստացողին ուշացրած յուրաքանչյուր օրվա համար տուգանք է վճարում չվճարված ալիմենտի գումարի 0,05 տոկոսի չափով:

Ալիմենտ ստացողը կարող է ալիմենտ վճարելու պարտավոր և ալիմենտը ժամանակին չվճարելու համար մեղավոր անձից բռնագանձելու պահանջ ներկայացնել նաև ալիմենտային պարտավորությունների կատարման ուշացմամբ պատճառված վնասների այն մասով, որ չեն ծածկվում տուգանքով:

**Հոդված 104. Ալիմենտի հաշվակցման և հետգանձման անթույլատրելիությունը**

1. Ալիմենտը չի կարող հաշվակցվել այլ հակընդդեմ պահանջներով:

2. Ալիմենտի վճարված գումարները չեն կարող հետ պահանջվել, բացառությամբ հետևյալ դեպքերի, երբ՝  
ա) վերացվել է ալիմենտ ստացողի կողմից կեղծ տեղեկություններ հաղորդելու կամ նրա կողմից կեղծ փաստաթղթեր ներկայացնելու հիման վրա ալիմենտ բռնագանձելու մասին դատարանի վճիռը.

բ) ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունն անվավեր է ճանաչվել այն ալիմենտ ստացողի կողմից խաբեության, սպառնալիքի կամ բռնության ազդեցության տակ կնքված լինելու հետևանքով.

գ) դատարանի վճռով հաստատվել է դատարանի վճիռը, ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը կամ կատարողական թերթը կեղծելու փաստը, որոնց հիման վրա վճարվել է ալիմենտը:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները կատարել է երեխայի կամ ալիմենտ ստացող չափահաս անգործունակ անձի ներկայացուցիչը, ապա ալիմենտի բռնագանձում չի կատարվում, իսկ վճարված ալիմենտի գումարները բռնագանձվում են մեղավոր ներկայացուցիչի՝ ալիմենտ վճարելու պարտավոր անձի հայցով:

**Հոդված 105. Ալիմենտի ինդեքսավորումը**

Ինդեքսավորման նպատակով ալիմենտի չափը դատարանը սահմանում է նվազագույն աշխատավարձի չափի որոշակի թվի համապատասխանող կայուն դրամական գումարով:

**Հոդված 106. Ալիմենտի վճարումն ալիմենտ վճարելու պարտավոր անձի մշտական բնակության համար օտարերկրյա պետություն մեկնելու դեպքում**

1. Այն անձը, որը մշտական բնակության համար մեկնում է օտարերկրյա պետություն, կարող է ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն կնքել ընտանիքի այն անդամների հետ, որոնց նա օրենքով պարտավոր է ապրուստի միջոց տրամադրել՝ սույն օրենսգրքի 87-րդ, 88-րդ, 91-րդ և 92-րդ հոդվածներին համապատասխան:

2. Համաձայնություն չկնքվելու դեպքում շահագրգիռ անձը կարող է դիմել դատարան՝ ալիմենտի չափը կայուն դրամական գումարով որոշելու և ալիմենտը միանվագ վճարելու կամ ալիմենտի հաշվին որոշակի գույք տրամադրելու կամ այլ եղանակով ալիմենտ վճարելու մասին:

**Հոդված 107. Դատարանի սահմանած ալիմենտի չափը փոփոխելը և ալիմենտ վճարելուց ազատելը**

1. Եթե ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայությամբ ալիմենտի չափը դատական կարգով որոշելուց հետո փոփոխվել է կողմերից մեկի գույքային և ընտանեկան դրությունը, ապա դատարանը կարող է յուրաքանչյուր կողմի պահանջով փոփոխել ալիմենտի սահմանված չափը կամ ալիմենտ վճարելու պարտավոր անձին ազատել դա վճարելուց: Ալիմենտի չափը փոփոխելիս կամ դա վճարելուց ազատելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև կողմերի՝ ուշադրության արժանի շահերը:

2. Դատարանը կարող է չափահաս գործունակ անձի օգտին ալիմենտի բռնագանձումը մերժել, եթե հաստատվի, որ նա ալիմենտ վճարելու պարտավոր անձի նկատմամբ կատարել է դիտավորյալ հանցագործություն, կամ չափահաս գործունակ անձն ընտանիքում դրսևորել է հակաբարոյական վարքագիծ:

**Հոդված 108. Ալիմենտային պարտավորությունների դադարումը**

1. Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ սահմանված ալիմենտային պարտավորությունները դադարում են կողմերից մեկի մահվան դեպքում՝ այդ համաձայնության գործողության ժամկետի լրանալով կամ այդ համաձայնությամբ նախատեսված այլ հիմքերով:

2. Դատական կարգով բռնագանձվող ալիմենտի վճարումը դադարում է՝

ա) երեխայի չափահաս դառնալով կամ մինչև չափահասության հասնելը երեխաների լրիվ գործունակություն

ծեռք բերելով.

բ) երեխային որդեգրելիս, որի ապրուստի համար բռնագանձվում էր ալիմենտը.

գ) ալիմենտ ստացողի աշխատունակությունը վերականգնվելիս կամ կարիքավորությունը դադարելիս.

դ) անաշխատունակ, օգնության կարիք ունեցող և ալիմենտ ստացող նախկին ամուսնու նոր ամուսնություն կնքելիս.

ե) ալիմենտ ստացող անձի կամ ալիմենտ վճարելու պարտավոր անձի մահվամբ:

## Բ Ա Ժ Ի Ն VI

### ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՍՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵՒՄՆԵՐԻ ԽՆԱՍՔԻ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ (վերնագիրը լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն)

#### Գ Լ ՈՒ Խ 17.

### ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՍՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ԽՆԱՍՔԻ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ (վերնագիրը խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)

**Հոդված 109.** Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը

1. Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները բացահայտում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, վարում են նման երեխաների հաշվառումը և, ելնելով ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից, ընտրում են այդ երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման ձևերը:

Խնամակալության և հոգաբարձության մարմիններից բացի, իրավաբանական և ֆիզիկական այլ անձանց, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման ուղղությամբ գործունեություն չի թույլատրվում:

2. Խնամակալության և հոգաբարձության մարմինները տեղական ինքնակառավարման մարմիններն են:

Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, որոնց կազմը հաստատում է համայնքի ղեկավարը:

Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(109-րդ հոդվածը փոփ., խմբ. 08.07.05 ՀՕ-144-Ն, լրաց., փոփ., խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)

**Հոդված 110.** Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բացահայտումը և հաշվառումը

1. Կազմակերպությունների (նախադպրոցական կրթական, հանրակրթական, բժշկական կամ նմանատիպ այլ հաստատությունների) պաշտոնատար այն անձինք, որոնք տեղեկություններ ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխայի մասին, պարտավոր են այն պահից, երբ նրանց հայտնի է դարձել այդ մասին, անհապաղ հաղորդել խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ ըստ երեխայի փաստացի գտնվելու վայրի:

Խնամակալության և հոգաբարձության մարմինը նման տեղեկություն ստանալու պահից երեք օրվա ընթացքում պարտավոր է անցկացնել երեխայի կյանքի պայմանների հետազոտություն և նրա ծնողների կամ ազգականների կողմից խնամքի փաստի բացակայություն բացահայտելիս ապահովել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա խնամքի և դաստիարակության կազմակերպման հարցի լուծումը:

2. Դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության և նմանատիպ այլ կազմակերպությունների (որտեղ գտնվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաները) ղեկավարները պարտավոր են, սկսած այն օրից, երբ նրանց հայտնի է դարձել, որ երեխան կարող է ընտանիքում դաստիարակության հանձնվել, եռօրյա ժամկետում այդ մասին հաղորդել խնամակալության և հոգաբարձության մարմին՝ ըստ տվյալ կազմակերպության գտնվելու վայրի:

3. Խնամակալության և հոգաբարձության մարմինը, բացառությամբ Երևանի քաղաքապետի, սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված տեղեկություններն ստանալուց հետո՝ 3 օրվա ընթացքում, այդ տեղեկություններն ուղարկում է մարզպետարան, ինչպես նաև ապահովում է երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպումը:

Մարզպետարանը երեխաների մասին նման տեղեկություններ ստանալու պահից երեք օրվա ընթացքում իրականացնում է երեխաների հաշվառումը և հայտնում այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին, ինչպես նաև ապահովում է այդ երեխաների իրավունքների և շահերի



պաշտպանությունը:

Երևանի քաղաքապետը սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված տեղեկություններն ստանալուց հետո՝ 3 օրվա ընթացքում, իրականացնում է երեխաների հաշվառումը և հայտնում այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին, ինչպես նաև ապահովում է այդ երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպումը, իրավունքների և շահերի պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումը, աջակցում է այդ երեխաների հետագա խնամքի և դաստիարակության կազմակերպմանը ընտանիքներում:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումն իրականացնելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նշված կազմակերպությունների ղեկավարները և պաշտոնատար անձինք իրենց պարտականությունները չկատարելու, ակնհայտորեն ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի գործողություններ կատարելու համար, որոնք ուղղված են երեխային դաստիարակության նպատակով ընտանիք հանձնելուց թաքցնելուն, պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

*(110-րդ հոդվածը խմբ. 08.07.05 ՀՕ-144-Ն, 19.05.09 ՀՕ-123-Ն, խմբ., փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

**Հոդված 111. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպումը**

*(վերնագիրը խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը և դաստիարակությունը կազմակերպվում են որդեգրման կամ խնամակալության (հոգաբարձության) միջոցով կամ խնամատար ընտանիքում, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝ դաստիարակչական, բժշկական հաստատությունում, բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպություններում կամ բնակչության կամ երեխայի սոցիալական պաշտպանության նպատակ հետապնդող այլ կազմակերպություններում:

Երեխայի խնամքը և դաստիարակությունը կազմակերպելիս պետք է հաշվի առնվեն նրա էթնիկական ծագումը, որոշակի կրոնական ու մշակութային պատկանելությունը, մայրենի լեզուն, դաստիարակության ու կրթության գործում հաջորդականությունն ապահովելու հնարավորությունները:

1.1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման հետ կապված բոլոր որոշումները պետք է հիմնված լինեն Երեխայի լավագույն շահերի ապահովման և նրա կարիքների բազմամասնագիտական գնահատման վրա և համապատասխանեն հետևյալ հիմնական նպատակներին.

1) ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքն ու դաստիարակությունն ընտանեկան միջավայրում, իսկ անհնարինության դեպքում՝ դրան առավել մոտ միջավայրում.

2) ապահովել երեխայի կրթությունը, խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու համար անհրաժեշտ պայմանները, ներառյալ՝ սոցիալական ու բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները՝ հաշվի առնելով «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորումները:

1.2. Խնամակալության (հոգաբարձության) կամ խնամատարության միջոցով, ինչպես նաև բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում (մանկատներում) խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու ընթացքում պետք է ապահովված լինեն երեխայի ու նրա ծնողի և մերձավոր ազգականների շփումն ու կապը, բացառությամբ այն դեպքի, երբ այդ շփումը, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին:

2. Մինչև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքում կամ սույն հոդվածի 1-ին մասում նշված կազմակերպություններում խնամքը և դաստիարակությունը կազմակերպելը երեխաների խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունների կատարումը ժամանակավորապես դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի վրա:

2.1. Երեխայի խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու ընթացքում խնամակալության և հոգաբարձության մարմինը շարունակում է համագործակցել նրա ծնողի հետ՝ հնարավորության դեպքում երեխային ծնողներին վերադարձնելու համար:

3. *(մասն ուժը կորցրել է 08.07.05 ՀՕ-144-Ն)*

4.

*(111-րդ հոդվածը փոփ. 08.07.05 ՀՕ-144-Ն, խմբ., փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

*(111-րդ հոդվածի 4-րդ մասը 21.12.17 ՀՕ-10-Ն օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ կետի լրացմամբ ուժի մեջ կմտնի 17.07.2018թ.)*

Գ Լ ՈՒ Խ 18.

*ԵՐԵՎԱՆԵՐԻ ՈՐԴԵԳՐՈՒՄԸ (ԴՍԵՐՎԱԳՐՈՒՄԸ)*

**Հոդված 112. Որդեգրման ենթակա երեխաները**

1. Որոշագրումը դատական ակտ է, որով որոշագրվող ձեռք է բերում կենսաբանական կապերին համարժեք ընտանեկան կապեր, որոնց շնորհիվ որոշագրողները և որոշագրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Որոշագրումն իրականացվում է՝ ելնելով Երեխայի լավագույն շահերից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ որոշագրողի և որոշագրվողի համադրելիության չափանիշների գնահատման հիման վրա:

Որոշագրումը համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման նախապատվելի ձևը:

2. Որոշագրում թույլատրվում է միայն երեխաների նկատմամբ և ելնելով նրանց շահերից՝ պահպանելով սույն օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով երեխաների լիարժեք ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացումն ապահովելու հնարավորությունները:

2.1. Կենտրոնական նյարդային համակարգի, օրգանական և ֆունկցիոնալ ախտահարումներ, բնածին, ձեռքբերովի մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխայի որոշագրում թույլատրվում է այն դեպքում, երբ որոշագրողի մոտ առկա է երեխային բուժման և խնամքի անհրաժեշտ պայմաններով ապահովելու հնարավորությունը:

2.2. Գտնված (ընկեցիկ) երեխան կարող է որոշագրման հանձնվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին տրված գտնված (ընկեցիկ) երեխայի ծնողներին չհայտնաբերելու վերաբերյալ համապատասխան գրությունն ստանալուց հետո, որը Ոստիկանությունը ներկայացնում է ոչ ուշ, քան հարցումն ստանալուց հետո՝ 3 ամսվա ընթացքում:

3. Չի թույլատրվում եղբայրների ու քույրերի որոշագրումը տարբեր անձանց կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որոշագրումը ելնում է երեխաների շահերից:

4. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխաների որոշագրումը թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ հնարավորություն չկա այդ երեխաներին Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտանիքում դաստիարակության հանձնելու կամ երեխաներին իրենց ազգականների կողմից որոշագրելու: Օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների որոշագրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ տրամադրվում են նշված երեխաներին կենտրոնացված հաշվառման վերցնելուց երեք ամիս հետո:

*(112-րդ հոդվածը լրաց. 08.07.05 ՀՕ-144-Ն, խմբ., փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

*(112-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության 2-րդ նախադասությունը 21.12.17 ՀՕ-10-Ն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ուժի մեջ կմտնի 17.07. 2018թ.)*

### **Հոդված 113. Երեխային որոշագրելու կարգը**

1. Որոշագրումը կատարում է դատարանը՝ երեխային որոշագրել ցանկացող անձի (անձանց) դիմումով: Երեխայի որոշագրումը հաստատելու մասին գործի քննությունը դատարանը կատարում է հատուկ վարույթի՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Որոշագրումը հաստատելու մասին գործերը դատարանը քննում է՝

ա. որոշագրել ցանկացող անձի, խնամակալության և հոգաբարձության մարմնի և 14 տարին լրացած երեխայի պարտադիր մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից երեխաներ որոշագրելու դեպքում,

բ. որոշագրել ցանկացող անձի, «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որոշագրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության նշանակած կենտրոնական մարմնի և 14 տարին լրացած երեխայի պարտադիր մասնակցությամբ՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխաներ որոշագրելու դեպքում:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից երեխայի որոշագրման համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) եզրակացությունը՝ որոշագրման հիմնավորվածության և այդ որոշագրումը որոշագրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին՝ նշելով որոշագրվող երեխայի և որոշագրողի (որոշագրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ, իսկ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության երեխայի որոշագրման դեպքում՝ կենտրոնական մարմնի եզրակացությունը՝ որոշագրման հիմնավորվածության և այդ որոշագրումը որոշագրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին:

Երեխաներին որոշագրման հանձնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում որոշագրողների ընտանիքներում երեխաների կյանքի և դաստիարակության պայմանների վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

3. Որդեգրված երեխայի և որդեգրողի (որդեգրողների) իրավունքներն ու պարտականությունները ծագում են որդեգրման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Դատարանը պարտավոր է երեխայի որդեգրումը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում այդ վճիռը ուղարկել քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին՝ ըստ երեխայի ծննդի պետական գրանցման վայրի, և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

Երեխայի որդեգրումը հաստատելու մասին գործի վարույթի կարճման կամ երեխայի որդեգրումը մերժելու մասին վճիռ կայացնելու դեպքում դատարանը պարտավոր է վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում այն ուղարկել գործին մասնակցող անձանց, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին, իսկ օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխայի որդեգրելու դեպքում՝ նաև կենտրոնական մարմին:

Երեխայի որդեգրումը ենթակա է պետական գրանցման՝ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**(113-րդ հոդվածը փոփ. 08.07.05 ՀՕ-144-Ն, խմբ., փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 114. Որդեգրման ենթակա երեխաների և երեխաներ որդեգրել ցանկացող անձանց հաշվառումը**

1. Որդեգրման ենթակա երեխաների հաշվառումն իրականացվում է սույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

1.1. Ամուսնության մեջ գտնվող անձանցից յուրաքանչյուրը պարտավոր է հաշվառվել որպես որդեգրող:

2. Երեխաներ որդեգրել ցանկացող անձանց հաշվառումն իրականացվում է փաստաթղթային և էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

**(114-րդ հոդվածը լրաց. 08.07.05 ՀՕ-144-Ն, լրաց., խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 115. Երեխաների որդեգրման միջնորդական գործունեության անթույլատրելիությունը**

1. Երեխաների որդեգրման միջնորդական գործունեություն (այսինքն՝ որդեգրել ցանկացող անձանց անունից և նրանց շահերից բխող այլ անձանց կողմից իրականացվող՝ երեխաներ ընտրելուն և որդեգրման հանձնելուն ուղղված յուրաքանչյուր գործունեություն) չի թույլատրվում: Այդպիսի գործունեություն չի համարվում խնամակալության և հոգաբարձության մարմինների և մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի գործունեությունը:

2. Որդեգրել ցանկացող անձինք որդեգրման գործընթացին կարող են մասնակցել անմիջականորեն կամ իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով:

3. Երեխաների որդեգրման միջնորդական գործունեություն իրականացնող անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

**(115-րդ հոդվածը փոփ. 08.07.05 ՀՕ-144-Ն)**

**Հոդված 116. Որդեգրելու իրավունք ունեցող անձինք**

1. Որդեգրողներ կարող են լինել չափահաս անձինք, բացառությամբ՝

ա) դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց.

բ) ամուսինների, որոնցից մեկը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

գ) դատական կարգով ծնողական իրավունքներից զրկված կամ ծնողական իրավունքները սահմանափակված անձանց.

դ) օրենքով իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար խնամակալի (հոգաբարձուի) պարտականություններից հեռացված անձանց.

ե) նախկին որդեգրողների, եթե որդեգրումը դատարանով վերացվել է նրանց մեղքով.

զ) այն անձանց, որոնք առողջական վիճակով չեն կարող իրականացնել ծնողական իրավունքներ:

Այն հիվանդությունների ցանկը, որոնց առկայության դեպքում անձը չի կարող երեխա որդեգրել, նրան ընդունել խնամակալության (հոգաբարձության), ընդունել ընտանիք դաստիարակության համար, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

է) այն անձանց, որոնք որդեգրման պահին չունեն այնպիսի եկամուտ, որը կապահովի որդեգրվող երեխայի նվազագույն կենսապայմանները.

ը) այն անձանց, որոնք չունեն մշտական բնակության վայր, ինչպես նաև այնպիսի բնակելի տարածություն, որը համապատասխանում է սանիտարական և տեխնիկական սահմանված պահանջներին.

թ) որդեգրման պահին մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն ունեցող անձանց:

2. Ամուսնության մեջ չգտնվող անձինք չեն կարող համատեղ որդեգրել միևնույն երեխային:

3. Միևնույն երեխային միաժամանակ որդեգրել ցանկացող մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվության իրավունք տրվում է երեխայի ազգականներին և խորթ ծնողներին, այն պայմանով, որ կապահավեն սույն հոդվածի 1-ին (բացառությամբ «է» և «ը» կետերի) և 2-րդ մասերով նախատեսված պահանջներն ու որդեգրվող երեխայի շահերը:

**(116-րդ հոդվածը փոփ. 08.07.05 ՀՕ-144-Ն)**

*(116-րդ հոդվածը 21.12.17 ՀՕ-10-Ն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի փոփոխություններով ուժի մեջ կանոնի 17.07. 2018թ.)*

**Հոդված 117. Որդեգրողի և որդեգրվող երեխայի միջև տարիքային տարբերությունը**

1. Որդեգրողի և որդեգրվողի տարիքային տարբերությունը պետք է լինի 18 տարուց ոչ պակաս և 50 տարուց ոչ ավելի, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխան որդեգրվում է որդեգրելու նախապատվության իրավունք ունեցող անձանց կողմից:

2. Երեխային խորթ հոր (խորթ մոր) կողմից որդեգրելիս սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքային տարբերության սահմանափակում չի նախատեսվում:

*(117-րդ հոդվածը խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

**Հոդված 118. Երեխային որդեգրելու համար ծնողների հրաժարումը կամ համաձայնությունը (վերնագիրը խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

1. Երեխային որդեգրելու համար անհրաժեշտ է՝

1) ծնողների գրավոր հրաժարումը՝ երեխայի նկատմամբ ծնողական իրավունքներից կամ

2) ծնողի գրավոր համաձայնությունը՝ երեխային որդեգրման տալու վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում երեխա որդեգրելու համաձայնություն կարող է տրվել միայն այն դեպքում, երբ երեխան ունի միայն մեկ ծնող: Ծնողի գրավոր համաձայնության դեպքում երեխան կարող է որդեգրվել միայն խորթ հոր կամ խորթ մոր կամ մերձավոր ազգականների կողմից: Երեխա որդեգրելու համար համաձայնությունը կարող է տրվել միայն երեխայի ծնվելուց հետո:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս անհրաժեշտ է նաև նրանց ծնողների կամ խնամակալների (հոգաբարձուների) համաձայնությունը, իսկ ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությունը:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում որդեգրման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

5. Երեխայի նկատմամբ ծնողական իրավունքներից հրաժարումը կամ ծնողների՝ երեխային որդեգրման տալու վերաբերյալ գրավոր համաձայնությունն արտահայտվում է երեխայի ծնողների ներկայացրած դիմումով, որը կազմվում է բացառապես երեխայի գտնվելու վայրի կամ դրա անհնարինության դեպքում՝ ծնողների գտնվելու վայրի տարածքի սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի ներկայացուցչի ներկայությամբ, հաստատվում այն կազմակերպության ղեկավարի կողմից, որտեղ գտնվում է երեխան, կամ նոտարի կողմից, եթե դիմումը կազմվում է երեխայի խնամատար ընտանիքի, երեխայի խնամակալի (հոգաբարձուի) կամ ծնողների գտնվելու վայրում:

6. Դիմումի ձևը հաստատվում է կառավարության լիազորված մարմնի իրավական ակտով:

7. Ծնողները կարող են հետ վերցնել երեխային որդեգրելու համար իրենց տված գրավոր հրաժարումը կամ համաձայնությունը մինչև նրան որդեգրելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

*(118-րդ հոդվածը փոփ. 08.07.05 ՀՕ-144-Ն, խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

**Հոդված 119. Երեխայի որդեգրումն առանց ծնողների համաձայնության**

Երեխային որդեգրելու համար նրա ծնողների համաձայնությունը չի պահանջվում այն դեպքերում, երբ՝

ա) նրանք անհայտ են, կամ դատարանը ճանաչել է անհայտ բացակայող.

բ) դատարանը նրանց ճանաչել է անգործունակ.

գ) դատարանը նրանց զրկել է ծնողական իրավունքներից.

դ) նրանք դատարանով անհարգելի ճանաչված պատճառներով մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չեն ապրում և խուսափում են նրան դաստիարակելուց ու պահելուց:

**Հոդված 120. Երեխային որդեգրելու համար խնամակալների (հոգաբարձուների) համաձայնությունը, որոնց ընտանիքներում գտնվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաները**

*(վերնագիրը փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

1. Խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխաներին որդեգրելու համար անհրաժեշտ է նրանց խնամակալների (հոգաբարձուների) գրավոր համաձայնությունը:

*(պարբերությունն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-10-Ն)*

2. Դատարանը կարող է, առանց սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց համաձայնության, ելնելով երեխայի շահերից, վճիռ կայացնել նրան որդեգրելու մասին:

*(120-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

**Հոդված 121. Որդեգրման համար որդեգրվող երեխայի համաձայնությունը**

1. Տասը տարին լրացած երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը:

2. Եթե մինչև որդեգրման համար դիմում տալը երեխան ապրել է որդեգրողի ընտանիքում և նրան համարում է իր ծնողը, ապա որդեգրումը բացառության կարգով կարող է կատարվել առանց որդեգրվող երեխայի համաձայնությունն ստանալու:

**Հոդված 122. Երեխայի որդեգրման համար որդեգրողի ամուսնու համաձայնությունը**

*(հոդվածն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-10-Ն)*

**Հոդված 123. Որդեգրված երեխայի անունը, հայրանունը, և ազգանունը**

1. Որդեգրված երեխայի համար կարող է պահպանվել նրա անունը, հայրանունը և ազգանունը:
2. Որդեգրված երեխայի հայրանունը որոշվում է որդեգրողի անունով, եթե որդեգրողը տղամարդ է, իսկ երեխան կնոջ կողմից որդեգրվելիս՝ նրա կողմից որպես որդեգրված երեխայի հայր նշված անձի անունով:
3. Որդեգրողի խնդրանքով որդեգրված երեխային տրվում է որդեգրողի ազգանունը, ինչպես նաև նրա նշած անունը:
4. Եթե որդեգրող ամուսինների ազգանունները տարբեր են, որդեգրող ամուսինների համաձայնությամբ որդեգրված երեխային տրվում է նրանցից մեկի ազգանունը:
5. Ամուսնության մեջ չգտնվող անձի կողմից երեխա որդեգրելիս նրա խնդրանքով որդեգրված երեխայի հոր (մոր) անունը և հայրանունը ծննդի պետական գրանցման գրքում գրառվում են այդ անձի (որդեգրողի) ցուցումով, իսկ ազգանունը՝ որդեգրող անձի ազգանվամբ:
6. Տասը տարին լրացած որդեգրված երեխայի անվան, հայրանվան և ազգանվան փոփոխում կարող է կատարվել միայն նրա համաձայնությամբ, բացի սույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերից:
7. Որդեգրված երեխայի անվան, հայրանվան և ազգանվան փոփոխման մասին նշվում է նրա որդեգրման մասին դատարանի վճռի մեջ:

**(123-րդ հոդվածը փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 124. Որդեգրվող երեխայի ծննդյան ժամանակի և ծննդյան վայրի փոփոխումը**

1. Որդեգրման գաղտնիքն ապահովելու համար որդեգրողի խնդրանքով կարող են փոփոխվել որդեգրվող երեխայի ծննդյան ժամանակը, բայց ոչ ավելի, քան երեք ամիս, ինչպես նաև նրա ծննդյան վայրը: Որդեգրված երեխայի ծննդյան ժամանակի փոփոխում թույլատրվում է միայն մինչև մեկ տարեկան երեխայի որդեգրելիս:
2. Որդեգրված երեխայի ծննդյան ժամանակի և (կամ) վայրի փոփոխման մասին նշվում է նրան որդեգրելու մասին դատարանի վճռի մեջ:

**Հոդված 125. Որդեգրողներին որպես որդեգրված երեխայի ծնողներ գրառելը**

1. Որդեգրողների խնդրանքով դատարանը կարող է որոշում կայացնել ծննդի պետական գրանցման գրքում որդեգրողներին որպես որդեգրված երեխայի ծնողներ գրառելու մասին:
2. Տասը տարին լրացած որդեգրված երեխայի նկատմամբ նման գրառում կատարելու համար անհրաժեշտ է երեխայի համաձայնությունը, բացի սույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերից:
3. Որպես որդեգրված երեխայի ծնողներ գրառվելու անհրաժեշտությունը նշվում է երեխային որդեգրելու մասին դատարանի վճռի մեջ:

**Հոդված 126. Երեխային որդեգրելու իրավական հետևանքները**

1. Որդեգրված երեխաներն ու նրանց սերունդը որդեգրողների և նրանց ազգականների նկատմամբ, իսկ որդեգրողներն ու նրանց ազգականները որդեգրված երեխաների ու նրանց սերունդի նկատմամբ իրենց անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներով ու պարտականություններով հավասարեցվում են ծագումով ազգականներին:
2. Որդեգրվածներն իրենց ծնողների (ազգականների) նկատմամբ կորցնում են անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները և ազատվում են պարտականություններից:
3. Երեխային մեկ անձի կողմից որդեգրելիս անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները կարող են պահպանվել մոր ցանկությամբ, եթե որդեգրողը տղամարդ է, կամ հոր ցանկությամբ, եթե որդեգրողը կին է:
4. Եթե որդեգրվող երեխայի ծնողներից մեկը մահացել է, ապա մահացած ծնողի (երեխայի պապի կամ տատի) խնդրանքով կարող են պահպանվել անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները մահացած ծնողի ազգականների նկատմամբ, եթե այդ են պահանջում երեխայի շահերը: Մահացած ծնողի ազգականների՝ որդեգրված երեխայի հետ շփման իրավունքն իրականացվում է սույն օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով:
5. Որդեգրված երեխայի հարաբերությունները ծնողներից մեկի կամ մահացած ծնողի ազգականների հետ պահպանելու մասին նշվում է երեխային որդեգրելու մասին դատարանի վճռի մեջ:
6. Երեխայի որդեգրման՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված իրավական հետևանքները վրա են հասնում՝ անկախ այդ երեխայի ծննդի ակտի գրառման մեջ որդեգրողին որպես ծնող գրառելուց:
7. Նորածին երեխա որդեգրած կինն ունի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված հետծննդյան արձակուրդի և սահմանված այլ արտոնությունների իրավունք:

**Հոդված 127. Որդեգրված երեխայի կենսաթոշակի իրավունքը պահպանելը**  
**(վերնագիրը փոփ. 08.07.05 ՀՕ-144-Ն)**

Երեխան, որը որդեգրվելու պահին ունեցել է ծնողների մահվան պատճառով կենսաթոշակի իրավունք, պահպանում է դա նաև որդեգրվելուց հետո:  
**(127-րդ հոդվածը փոփ. 08.07.05 ՀՕ-144-Ն)**

**Հոդված 128. Երեխայի որդեգրման գաղտնիքը**

1. Երեխայի որդեգրման գաղտնիքը պահպանվում է օրենքով:  
Երեխայի որդեգրման մասին վճիռ կայացրած դատավորները կամ որդեգրման պետական գրանցում

իրականացնող քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնի ղեկավարը և աշխատողները, ինչպես նաև որդեգրման մասին տեղյակ այլ անձինք պարտավոր են պահպանել երեխայի որդեգրման գաղտնիքը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք, որոնք իրապարակում են երեխայի որդեգրման գաղտնիքը նրա որդեգրողների կամքին հակառակ, պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

(128-րդ հոդվածը 21.12.17 [ՀՕ-10-Ն օրենքի 29-րդ հոդվածի փոփոխություններով ուժի մեջ կանոնի 17.07.2018թ.](#))

## **Հոդված 128.1. Որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունը**

1. Որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի և մարզպետարանի (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) կողմից՝ համատեղ, իսկ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից (այսուհետ՝ վերահսկողություն իրականացնող մարմին): Հայաստանի Հանրապետությունից այլ պետությունում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում, եթե այլ բան նախատեսված չէ մյուս պետության օրենքով:

2. Որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողության նպատակն է նպաստել երեխայի ինտեգրմանը և բարեկեցությանը, ինչպես նաև իրավունքների և շահերի ոտնահարման կանխարգելմանը որդեգրողի ընտանիքում:

3. Որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է որդեգրման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում:

4. Որդեգրված երեխայի բնակության վայրի փոփոխության դեպքում որդեգրողը պարտավոր է բնակության վայրի փոփոխությունից հետո՝ առնվազն մեկ ամսվա ընթացքում, տեղեկացնել վերահսկողություն իրականացնող մարմնին:

5. Վերահսկողության ժամանակահատվածում որդեգրողը պարտավոր է աջակցել վերահսկողություն իրականացնող մարմնին որդեգրված երեխայի մասին տեղեկատվություն ձեռք բերելու գործընթացում:

6. Վերահսկողությունն իրականացնող մարմինն իրավունք ունի՝

1) սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի (այսուհետ՝ սեփականատեր) համաձայնությամբ մուտք գործելու երեխայի բնակության վայր:

2) ուսումնասիրելու երեխայի կենսապայմանները և դրանց ապահովվածությունը:

3) անարգել շփվելու երեխայի և որդեգրողի (որդեգրողների), ինչպես նաև նրա մերձավոր ազգականների, հարևանների, կրթական հաստատությունների աշխատակիցների հետ՝ պահպանելով որդեգրման գաղտնիությունը:

4) կատարելու Երեխայի լավագույն շահերից բխող՝ օրենքով նախատեսված այլ գործողություններ:

7. Այն դեպքում, երբ վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից երեխայի բնակության վայր մուտք գործելը նպատակ է հետապնդում կանխել երեխայի կյանքին և առողջությանն սպառնացող անմիջական վտանգը, իսկ սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով սահմանված համաձայնությունը բացակայում է, ապա վերահսկողություն իրականացնող մարմինը Ոստիկանության աջակցությամբ և բազմաբնակարան շենքի կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ իրավունք ունի մուտք գործելու երեխայի բնակության վայր:

8. Բնակության վայր մուտք գործելուց հետո կազմվում է արձանագրություն, որում հստակ նշվում են արձանագրության կազմման օրը և ժամը, բնակարանի գտնվելու վայրը, գործողություններին մասնակցած անձանց անունները, ազգանունները, պաշտոնները և իրականացված գործողությունները:

9. Արձանագրության մեկ օրինակը ստորագրությամբ հանձնվում է բնակարանի սեփականատիրոջը կամ նրա լիազորած անձին:

10. Եթե վերահսկողություն իրականացնող մարմնի ներկայացուցիչը սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում Ոստիկանության աջակցությամբ մուտք է գործել երեխայի բնակության վայր դրա սեփականատիրոջ կամ նրա լիազորած անձի բացակայությամբ, ապա անհրաժեշտ գործողություններն ավարտելուց հետո Ոստիկանության կողմից ապահովվում է բնակարանի հետագա պահպանությունը՝ մինչև երեք ժամ տևողությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ բնակելի տարածքում գտնվում է այն օգտագործելու իրավունք ունեցող չափահաս անձը: Համապատասխան գործողությունները կատարելուց հետո կամ երեք ժամը լրանալուց հետո երեխայի բնակվելու վայրի բանալիներն ի պահ են տրվում բազմաբնակարան շենքի կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչին Ոստիկանության կնիքով կնքված փակ ծրարով, որն առաջին իսկ հնարավորության դեպքում հանձնվում է տվյալ բնակելի տարածությունն օգտագործելու իրավունք ունեցող չափահաս անձին: Եթե երեխայի բնակության վայր մուտք գործելն իրականացվել է մուտքի դուռը վնասելով, ապա մինչև բանալիները ի պահ հանձնելը վերահսկողություն իրականացնող մարմնի ներկայացուցիչը միջոցներ է ձեռնարկում մուտքի դուռը վերանորոգելու ուղղությամբ:

*(128-1-ին հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

**Հոդված 129. Երեխայի որդեգրումը վերացնելը**

1. Երեխայի որդեգրումը վերացվում է դատական կարգով:
2. Երեխայի որդեգրման վերացման մասին գործը քննվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ:
3. Որդեգրումը դադարում է երեխայի որդեգրումը վերացնելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:  
Դատարանը պարտավոր է երեխայի որդեգրումը վերացնելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում այդ վճռի քաղվածքն ուղարկել որդեգրման պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

**Հոդված 130. Երեխայի որդեգրումը վերացնելու հիմքերը**

1. Հաշվի առնելով Երեխայի լավագույն շահերը՝ երեխայի որդեգրումը կարող է վերացվել, եթե որդեգրողը՝
  - 1) խուսափում է իր վրա դրված ծնողական պարտականությունները կատարելուց.
  - 2) չի փոխում իր վարքագիծը ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում.
  - 3) երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողության իրականացմանը խոչընդոտելու համար որդեգրողը վարչական պատասխանատվության է ենթարկվել և 15-օրյա ժամկետում չի կատարել ստանձնած պարտավորությունը.
  - 4) առանց հարգելի պատճառի հրաժարվում է վերցնել իր երեխային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններից.
  - 5) մեկ տարի անընդմեջ առանց հարգելի պատճառի հրաժարվում է վերցնել իր երեխային դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ հաստատություններից.
  - 6) չարաշահում է իր ծնողական իրավունքները, այդ թվում՝ իր վարքագծով վնասակար ազդեցություն է գործում երեխայի վրա.
  - 7) տառապում է քրոնիկ ալկոհոլամոլությամբ, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ.
  - 8) տառապում է քրոնիկ հոգեկան հիվանդություններով, որոնց ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.
  - 9) դաժանաբար է վարվում երեխայի հետ, մասնավորապես՝
    - ա. պարբերաբար այնպիսի ֆիզիկական բռնություն է գործադրում նրա նկատմամբ, որը չի պարունակում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի հատկանիշներ,
    - բ. հոգեբանական բռնություն է գործադրում նրա նկատմամբ, այն է՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական բռնություն գործադրելու սպառնալիքը, արժանապատվության պարբերական նվաստացումը.
  - 10) դատարանի կողմից մահացած կամ անհայտ բացակայող ճանաչված ծնողի ներկայանալու հիմքով դատարանի համապատասխան վճիռը նրան մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու մասին վերացվել է, և այդ ծնողը դիմել է դատարան որդեգրումը վերացնելու նպատակով.
  - 11) դատարանի դատական ակտի համաձայն անգործունակ ճանաչված ծնողի գործունակությունը վերականգնվել է, և այդ ծնողը դիմել է դատարան որդեգրումը վերացնելու նպատակով:
2. Որդեգրումը վերացվում է, եթե որդեգրողը դատապարտվել է իր երեխայի դեմ ուղղված դիտավորյալ հանցագործության համար:

*(130-րդ հոդվածը փոփ., խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

*(130-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը 21.12.17 ՀՕ-10-Ն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ուժի մեջ կանոնի 17.07.2018թ.)*

**Հոդված 131. Երեխայի որդեգրումը վերացնելու պահանջի իրավունք ունեցող անձինք**

Երեխայի որդեգրումը վերացնելու պահանջի իրավունք ունեն նրա ծնողները, երեխայի որդեգրողները, խնամակալության և հոգաբարձության մարմինը, ինչպես նաև տասնութ տարին լրացած որդեգրվածը՝ սույն օրենսգրքի 133-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

**Հոդված 132. Երեխայի որդեգրումը վերացնելու հետևանքները**

1. Դատական կարգով երեխայի որդեգրումը վերացնելիս որդեգրված երեխայի և որդեգրողների (որդեգրողների ազգականների) փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները դադարում են, և վերականգնվում են երեխայի ու նրա ծնողների (ազգականների) փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, եթե դա են պահանջում երեխայի շահերը:
2. Որդեգրումը վերացնելիս երեխան դատարանի վճռով վերադարձվում է ծնողներին: Եթե ծնողները բացակայում են, կամ երեխային ծնողներին վերադարձնելը հակասում է նրա շահերին, ապա երեխայի խնամքի կազմակերպման պարտականությունը դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի վրա:
3. Որդեգրման վերացման հարցի հետ միաժամանակ դատարանը նաև որոշում է որդեգրման կապակցությամբ երեխային տրված անունը, հայրանունը և ազգանունը, ինչպես նաև ծննդյան փոփոխված ժամանակը և վայրը պահպանելու հարցը:

Տասը տարին լրացած երեխայի անունը, հայրանունը և ազգանունը փոփոխել հնարավոր է միայն նրա համաձայնությամբ:

*(132-րդ հոդվածը խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

**Հոդված 133. Որոշագրված երեխայի չափահաս դառնալու դեպքում որոշագրումը վերացնելու անթույլատրելիությունը**

Երեխայի որոշագրման վերացում չի թույլատրվում, եթե որոշագրումը վերացնելու մասին պահանջ ներկայացնելու պահին որոշագրված երեխան դարձել է չափահաս, բացի այն դեպքերից, երբ նման վերացման համար առկա են որոշագրողի և որոշագրված երեխայի, ինչպես նաև որոշագրված երեխայի ծնողների փոխադարձ համաձայնությունը, եթե ծնողները ողջ են, գրկված չեն ծնողական իրավունքներից, կամ դատարանը նրանց անգործունակ չի ճանաչել:

## Գ Լ ՈՒ Խ 19.

### *ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԱՔԱՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒՆԱՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԱՐ*

**Հոդված 134. Երեխաները, որոնց նկատմամբ սահմանվում է խնամակալություն կամ հոգաբարձություն**

1. Խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանվում է այն երեխաների նկատմամբ, ովքեր մնացել են առանց ծնողական խնամքի՝ նրանց պահելու, դաստիարակելու և կրթություն տալու, ինչպես նաև նրանց իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակներով:

2. Երեխաների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն նշանակվում և դադարեցվում է քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Խնամակալների և հոգաբարձուների ընտանիքում բնակվող երեխայի խնամքի և դաստիարակության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է սույն օրենսգրքի 139.1-ին հոդվածով սահմանված կարգով:

*(134-րդ հոդվածը լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

**Հոդված 135. Երեխաների խնամակալները (հոգաբարձուները)**

1. Երեխաների խնամակալներ (հոգաբարձուներ) կարող են նշանակվել միայն չափահաս գործունակ անձինք՝ իրենց համաձայնությամբ:

2. Երեխայի խնամակալ (հոգաբարձու) նշանակելիս հաշվի են առնվում խնամակալի (հոգաբարձուի) բարոյական և անձնական այլ հատկանիշներ, խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունները կատարելու նրա ունակությունները, խնամակալի (հոգաբարձուի) և երեխայի փոխհարաբերությունները, երեխայի նկատմամբ խնամակալի (հոգաբարձուի) ընտանիքի անդամների վերաբերմունքը, ինչպես նաև երեխայի ցանկությունը, եթե դա հնարավոր է:

3. Խնամակալ (հոգաբարձու) չեն նշանակվում քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ հիվանդ անձինք, կյանքի և առողջության նկատմամբ դիտավորյալ հանցագործություններ կատարած անձինք, խնամակալների (հոգաբարձուների) պարտականություններից հեռացված անձինք, ծնողական իրավունքներից գրկված անձինք, ծնողական սահմանափակ իրավունքներով անձինք, նախկին որոշագրողները, եթե որոշագրումը վերացվել է նրանց մեղքով, ինչպես նաև այն անձինք, ովքեր առողջական վիճակով չեն կարող իրականացնել երեխայի դաստիարակության պարտականությունը:

**Հոդված 136. Խնամակալությունը (հոգաբարձությունը) դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում գտնվող երեխաների նկատմամբ**

*(վերնագիրը փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

1. Դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում պետության լրիվ խնամքի տակ գտնվող երեխաների նկատմամբ խնամակալ (հոգաբարձու) չի նշանակվում: Նրանց պարտականությունների կատարումը դրվում է այդ կազմակերպությունների վրա:

Խնամակալների (հոգաբարձուների) կողմից երեխաներին սույն հոդվածում նշված կազմակերպություններում ժամանակավորապես տեղավորելը չի դադարեցնում այդ երեխաների նկատմամբ խնամակալի (հոգաբարձուի) իրավունքներն ու պարտականությունները:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խնամակալը (հոգաբարձուն) իրավունք չունի խոչընդոտելու ծնողների և մերձավոր այլ ազգականների հետ երեխայի շփվելուն, բացառությամբ, երբ նման շփումը չի համապատասխանում երեխայի շահերին:

3. Խնամակալի (հոգաբարձուի) քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են քաղաքացիական օրենսգրքով:

4. Խնամակալն ու հոգաբարձուն խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխայի նկատմամբ խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարում են անհատույց:

*(136-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ՀՕ-10-Ն)*

## ԳԼՈՒԽ 20.



**ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՐԵՒԱՅԻ ԽՆԱՄՔՐ ԵՎ ՂԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ  
(վերնագիրը խմբ. 21.12.17 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 137. Խնամատարությունը**

1. Խնամատարությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքի և դաստիարակության ժամանակավոր կազմակերպումն է այլ ընտանեկան միջավայրում իրավասու մարմինների կողմից ընտրված, հաշվառված, վերապատրաստված, որակավորված անձի միջոցով մինչև երեխայի ընտանիքում խնամատարության կիրառման հիմք հանդիսացած իրավիճակի վերացումը: Սույն մասով սահմանված անձանց ընտրության, հաշվառման, որակավորման և վերապատրաստման կարգը, ինչպես նաև երեխայի ընտանիքում խնամատարության կիրառման հիմք հանդիսացող վիճակի փոփոխումն ու դրա չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Այն անձը, որը խնամքի և դաստիարակության պարտավորություն է ստանձնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի նկատմամբ, համարվում է խնամատար ծնող: Այն երեխան, որի խնամքը և դաստիարակությունը կազմակերպվում են խնամատար ընտանիքում, համարվում է հոգեզավակ, իսկ խնամատար ծնողից և հոգեզավակից կազմված ընտանիքը՝ խնամատար ընտանիք:

3. Խնամատար ընտանիքում խնամքը և դաստիարակությունը կազմակերպվում են խնամատարության պայմանագրով նախատեսված ժամկետով, սակայն ոչ ավելի, քան մինչև երեխայի 18 տարին լրանալը: Խնամատարությունը կարող է իրականացվել մինչև 23 տարեկանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

4. Սուր կամ քրոնիկ վարակիչ հիվանդությամբ տառապող երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կարող են կազմակերպվել, եթե վերջինս անցել է հաշմանդամություն կամ այլ հատուկ կարիք կամ դաստիարակության դժվարություն ունեցող երեխային խնամելու և դաստիարակելու համապատասխան վերապատրաստում, ինչպես նաև ունի երեխայի կարիքներին համապատասխանող կենցաղային և այլ անհրաժեշտ պայմաններ:

5. Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման հնարավորությունը դիտարկվում է նախքան երեխայի խնամքը և դաստիարակությունը դաստիարակչական, բժշկական հաստատությունում, բնակչության սոցիալական պաշտպանության և նմանատիպ այլ կազմակերպությունում կազմակերպելը:

6. Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպումը հիմք չէ երեխային որդեգրելը կամ խնամակալության (հոգաբարձության) հանձնելը մերժելու համար:

7. Երեխայի ծնողն իրավունք ունի մասնակցելու իր երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու գործընթացին, եթե դա չի հակասում երեխայի շահերին:

8. Երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու դեպքում երեխայի ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են կապ պահպանել երեխայի հետ, եթե նրանք դատական կարգով չեն զրկվել ծնողական իրավունքներից, և եթե այդ կապի պահպանումը բխում է երեխայի շահերից: Ծնողն իրավունք ունի վարչական կամ դատական կարգով վիճարկելու երեխային խնամատարության հանձնելու որոշումը:

9. Երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելը չի սահմանափակում նաև մերձավոր ազգականների՝ երեխայի հետ կապ պահպանելու իրավունքը, եթե կապի պահպանումը բխում է երեխայի շահերից:

10. Եթե ծնողը գտնվում է արգելանքի տակ, ապա Հայաստանի Հանրապետության մարզերում մարզպետարանները, իսկ Երևան քաղաքում Երևանի քաղաքապետարանը պարտավոր են տեղեկացնել ծնողին երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու, խնամատարության տեսակի, խնամքի և դաստիարակության ընթացքի և երեխային վերաբերող այլ որոշումների մասին դրանց ընդունումից հետո ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

11. Խնամատար ընտանիքի ընտրությունը Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացնում են մարզպետարանները, իսկ Երևան քաղաքում իրականացնում է Երևանի քաղաքապետարանը՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը:

12. Երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*(137-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը և 12-րդ մասը 21.12.17 ՀՕ-10-Ն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ուժի մեջ կմտնեն 17.07. 2018թ.)*

**Հոդված 137.1. Խնամատար ընտանիքում երեխայի խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու մասին պայմանագիրը**

1. Խնամատար ընտանիքում երեխայի խնամքը և դաստիարակությունը իրականացվում են երեխայի խնամքը

և դաստիարակությունը կազմակերպելու մասին պայմանագրի (այսուհետ՝ Խնամատարության պայմանագիր) հիման վրա:

2. Խնամատարության պայմանագիրը ծնողների (երեխայի այլ օրինական ներկայացուցչի), խնամատար ծնողի և Հայաստանի Հանրապետության մարզերում մարզպետարանների, իսկ Երևան քաղաքում Երևանի քաղաքապետարանի միջև կնքված պայմանագիր է:

3. Ծնողը չի կարող հանդես գալ որպես Խնամատարության պայմանագրի կողմ, եթե նա՝

1) դատական կարգով զրկվել է ծնողական իրավունքներից.

2) դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ.

3) դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ մահացած:

4. Ծնողը կարող է հանդես չգալ որպես Խնամատարության պայմանագրի կողմ արգելանքի տակ գտնվելու, ժանր հիվանդության կամ ներկայանալու անհնարինության հիմնավոր պատճառով՝ այդ մասին գրավոր հայտնելով Հայաստանի Հանրապետության մարզերում՝ մարզպետարաններ, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարան:

5. Խնամատարության պայմանագրով սահմանվում են երեխայի խնամքի, դաստիարակության և կրթության պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև այդ պայմանագրի ժամկետի երկարաձգման, դադարման հիմքերն ու հետևանքները:

6. Խնամատարության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերի համաձայնությամբ՝

1) խնամատար ծնողների նախաձեռնությամբ՝ հարգելի պատճառների (հիվանդության, ընտանեկան կամ գույքային դրության փոփոխման, հոգեզավակի հետ փոխըմբռնման բացակայության, երեխաների անհամատեղելիության և այլն) առկայության դեպքում.

2) երեխայի ծնողի (օրինական ներկայացուցչի) պահանջով՝ խնամատարության կիրառման համար հիմք հանդիսացած պատճառի վերացման, այդ թվում՝ ընտանիքի հետ վերամիավորման դեպքում.

3) Հայաստանի Հանրապետության մարզերում մարզպետարանների, իսկ Երևանում քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ խնամատար ընտանիքում երեխայի խնամքն ապահովելու, նրան դաստիարակելու և կրթություն ստանալու համար անբարենպաստ պայմաններ առաջանալու կամ երեխային ծնողներին վերադարձնելու կամ ազգականների խնամակալությանը (հոգաբարձությանը) հանձնելու կամ երեխային որդեգրելու դեպքերում:

7. Խնամատարության պայմանագրի օրինակելի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

## **Հոդված 138. Հոգեզավակը**

1. Հոգեզավակը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխան է, որի խնամքը և դաստիարակությունը կազմակերպվում են խնամատար ընտանիքում:

2. Արգելվում է եղբայրների և քույրերի խնամքը և դաստիարակությունը տարբեր խնամատար ընտանիքներում կազմակերպելը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է նրանց կամ նրանցից մեկի շահերից:

3. Հոգեզավակը պահպանում է իրեն հասանելիք ալիմենտի, կենսաթոշակի, բնակելի տարածության սեփականության օգտագործման իրավունքը, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բնակելի տարածություն ստանալու իրավունքը: Հոգեզավակը պահպանում է նաև սույն օրենսգրքի 42-44-րդ հոդվածներով նախատեսված իրավունքները:

4. Հոգեզավակի ալիմենտի համար վճարները և կենսաթոշակը տնօրինում է խնամատար ծնողը՝ հաշվի առնելով Երեխայի լավագույն շահերը: Խնամատար ծնողը գումարի ծախսման մասին վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կողմից հարցում ստանալու դեպքում այդ մասին տալիս է համապատասխան տեղեկատվություն:

5. Հոգեզավակի որդեգրումն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված կարգով: Որդեգրման պահից Խնամատարության պայմանագիրը դադարում է:

6. Խնամատար ծնողի և հոգեզավակի տարիքային տարբերությունը պետք է լինի 18 տարուց ոչ պակաս և 50 տարուց ոչ ավելի, իսկ երեխային խնամատարության հանձնելու պահին խնամատար ծնողներից յուրաքանչյուրի տարիքը չի կարող գերազանցել 55 տարին:

### **Հոդված 138.1. Խնամատար ծնողները**

1. Խնամատար ծնող կարող է լինել Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության չափահաս քաղաքացին, բացառությամբ՝

1) դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց.

2) ամուսինների, որոնցից մեկին դատարանը ճանաչել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) դատական կարգով ծնողական իրավունքներից զրկված կամ սահմանափակ ծնողական իրավունքներով անձանց.

4) օրենքով իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով խնամակալի

(հոգաբարձուի) պարտականություններից հեռացված անձանց.

5) նախկին որդեգրողների, եթե որդեգրումը դատական կարգով վերացվել է նրանց մեղքով.

6) այն անձանց, որոնք առողջական վիճակի պատճառով չեն կարող իրականացնել ծնողական պարտականություններ.

7) այն անձանց, որոնք չունեն մշտական բնակության վայր, ինչպես նաև այնպիսի բնակելի տարածություն, որը համապատասխանում է սահմանված սանիտարական և տեխնիկական պահանջներին.

8) այն անձանց, որոնք այդ պահին ունեն դատվածություն՝ մարդու կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործության համար.

9) այն անձանց, որոնք կախվածություն ունեն ակոհոլից, թմրանյութերից, տառապում են թունամոլությամբ կամ զբաղվում են մարմնավաճառությամբ և հաշվառված են համապատասխան բժշկական կազմակերպությունում կամ ոստիկանությունում համապատասխան ստորաբաժանման կողմից:

2. Խնամատար ծնողները հոգեզավակի նկատմամբ ձեռք են բերում խնամակալի իրավունքներ ու պարտականություններ:

### **Հոդված 139. Խնամատար ընտանիքի տեսակները և խնամատարության ժամկետները**

1. Խնամատար ընտանիքի տեսակներն են՝

1) մասնագիտացված խնամատար ընտանիքը, որտեղ խնամք են ստանում հաշմանդամություն կամ ծանր առողջական խնդիրներ ունեցող, դաստիարակության դժվարություններ ունեցող, հոգեկան կամ վարքի խանգարումով տառապող, խոր սթրես ապրած, հոգեցնցման (հոգեկան տրավմայի) ենթարկված երեխաները, ինչպես նաև անչափահաս մայրերը կամ նրանց երեխաները.

2) ձգնաժամային խնամատար ընտանիքը, որտեղ երեխայի խնամքը և դաստիարակությունը կազմակերպվում են՝

ա. երեխայի ծնողի (այլ օրինական ներկայացուցչի) ծանր հիվանդության դեպքում,

բ. երեխայի ծնողի (այլ օրինական ներկայացուցչի) կալանավորման կամ ազատագրկման դեպքում, եթե պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու որոշում չի կայացվել,

գ. եթե երեխային պետք է անհապաղ առանձնացնել ծնողից (այլ օրինական ներկայացուցչից) վերջինիս գործողության կամ անգործության հետևանքով երեխայի կյանքին կամ առողջությանն սպառնացող անմիջական վտանգի դեպքում,

դ. եթե տարերային կամ տեխնածին աղետի հետևանքով երեխայի ծնողի (այլ օրինական ներկայացուցչի) համար անհնար է իրականացնել կամ ապահովել երեխայի խնամքն ու դաստիարակությունը,

ե. եթե ծնողը (այլ օրինական ներկայացուցիչը) հոգ չի տանում երեխայի մասին, այդ թվում՝ չի ապահովում նրա պատշաճ խնամքը և դաստիարակությունը,

զ. ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում, եթե ծնողները համաձայնություն ձեռք չեն բերել երեխայի բնակության վայրի կամ տեսակցությունների վերաբերյալ.

3) արձակուրդային խնամատար ընտանիքը, որտեղ երեխայի խնամքը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել անընդմեջ կամ շաբաթական մի քանի օր տևողությամբ, այդ թվում՝ ոչ աշխատանքային՝ տոնական, հիշատակի և հանգստյան օրերին: Արձակուրդային խնամատարությունը կազմակերպվում է դաստիարակության դժվարություններ, առողջական խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող, հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների խնամքը և դաստիարակությունը հոգալու և կազմակերպելու կամ երեխայի խնամքի և դաստիարակության հետ կապված այլ խնդիրներ ունեցող ծնողին (այլ օրինական ներկայացուցչին) աջակցելու նպատակով.

4) ընդհանուր խնամատար ընտանիքը, որտեղ երեխայի խնամքը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել այն դեպքում, երբ առկա չեն սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված խնամատար ընտանիքներ ընտրելու հիմքերը:

2. Մասնագիտացված խնամատարությունը կարող է իրականացվել նաև 18-23 տարեկան անձանց նկատմամբ՝ որպես պետության կողմից տրամադրվող հետխնամքի աջակցություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Ձգնաժամային խնամատար ընտանիքում երեխայի խնամքը կազմակերպվում է ընդհանուր կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխայի մերձավոր ազգականը գրավոր համաձայնություն է տալիս երեխայի խնամքը և դաստիարակությունն ստանձնելու մասին: Այդ դեպքում, հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը և երեխայի խնամատարությունն ստանձնելու ցանկություն հայտնած մերձավոր ազգականի՝ օրենքով սահմանված պահանջներին համապատասխանությունը, երեխան ձգնաժամային խնամատարության հանձնվում է այդ մերձավոր ազգականին: Ձգնաժամային խնամատարությունը կազմակերպվում է մինչև մեկ ամիս ժամկետով, անհրաժեշտության դեպքում՝ ևս մեկ ամիս երկարաձգելու հնարավորությամբ: Այն համարվում է անցումային փուլ, որի ընթացքում պետք է որոշվեն երեխայի հետագա խնամքի ձևը, ժամկետներն ու պայմանները:

4. Խնամատարությունը կարող է լինել կարճաժամկետ և երկարաժամկետ մինչև երեխայի չափահաս դառնալը: Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խնամատար ընտանիքները կարող են լինել

կարճաժամկետ կամ երկարաժամկետ, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված խնամատար ընտանիքները՝ միայն կարճաժամկետ, իսկ 4-րդ կետերով նախատեսված խնամատար ընտանիքները՝ միայն երկարաժամկետ:

5. Կարճաժամկետ խնամատարությունը կիրառվում է մինչև մեկ ամիս ժամկետով, անհրաժեշտության դեպքում՝ ևս մեկ ամիս երկարաձգելու հնարավորությամբ, եթե սույն օրենսգրքով առավել սեղմ ժամկետ նախատեսված չէ: Կարճաժամկետ խնամատարության ժամկետի ավարտից հետո, եթե հնարավոր չէ երեխային վերադարձնել կենսաբանական կամ խնամակալի ընտանիք, իսկ խնամատար ընտանիքը պատրաստ է շարունակել երեխայի խնամքը և դաստիարակությունը, ապա նախապատվությունը տրվում է նույն ընտանիքում խնամատարության ժամկետը երկարաձգելուն:

6. Երկարաժամկետ խնամատարությունը կիրառվում է մեկ տարի և ավելի ժամկետով: Երկարաժամկետ խնամատարության պայմանագրի երկարաձգում թույլատրվում է, եթե երեխայի վերադարձն ընտանիք կամ երեխայի որդեգրումը կամ խնամակալությունը (հոգաբարձությունը) հնարավոր չէ:

*(139-րդ հոդվածի 2-րդ մասը 21.12.17 [ՀՕ-10-Ն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ուժի մեջ կմտնի 17.07.2018թ.\)](#)*

#### **Հոդված 139.1. Խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի և դաստիարակության նկատմամբ վերահսկողությունը**

1. Խնամատար ծնողի ստանձնած պարտականությունների և հոգեզավակի խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու մասին պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության մարզերում մարզպետարանների, իսկ Երևան քաղաքում Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվում է խնամատար ընտանիքում տեղավորված երեխայի կյանքի, առողջության, դաստիարակության և կենսապայմանների վերահսկողություն:

2. Խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է խնամատարության պայմանագրի ողջ ժամանակահատվածում:

3. Վերահսկողության ժամանակահատվածում խնամատար ծնողը վերահսկողություն իրականացնող մարմնի ներկայացուցչին սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով տրամադրում է հոգեզավակի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունը ձեռք բերելուն խոչընդոտելու դեպքում վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի ներկայացուցիչը պարտավոր է այդ տեղեկությունն ստանալ անձամբ երեխայից:

5. Վերահսկողությունն իրականացվում է՝

1) երեխայի, խնամատար ծնողի հետ պարբերաբար հանդիպումների և հարցազրույցների միջոցով.

2) խնամատար ընտանիք պարբերաբար այցելությունների, մշտադիտարկման (մոնիտորինգ), տեղում ուսումնասիրություն իրականացնելու միջոցով:

6. Վերահսկողության ընթացքում կիրառվում են սույն օրենսգրքի 128.1-ին հոդվածի 6-10-րդ մասերով սահմանված դրույթները:

7. Խնամատար ընտանիքի բնակության վայրի հնարավոր փոփոխության դեպքում խնամատար ծնողը պարտավոր է տեղափոխումից առնվազն 10 աշխատանքային օր առաջ այդ մասին տեղեկացնել իրավասու մարմնին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տեղափոխումից հետո՝ եռօրյա ժամկետում՝ տեղեկացնելով նաև խնամատարության պայմանագրի կողմ հանդիսացող մարզպետարանին, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանին:

8. Վերահսկողության կարգը, խնամատար ընտանիքի հետ հանդիպումների և այցելությունների պարբերականությունը, ուսումնասիրության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*(139.1-ին հոդվածի 8-րդ մասը 21.12.17 [ՀՕ-10-Ն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ուժի մեջ կմտնի 17.07.2018թ.\)](#)*

#### **Հոդված 140. Խնամատար ընտանիքին վճարվող դրամական միջոցները**

1. Խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով վճարվում են դրամական միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով և չափով:

2. Խնամատար ընտանիքին վճարվող դրամական միջոցները կազմված են՝

1) երեխայի խնամքի և դաստիարակության համար նախատեսված միջոցներից.

2) երեխայի խնամքի և դաստիարակության դիմաց տրվող վարձատրությունից:

3. Խնամատար ընտանիքին վճարվող դրամական միջոցների ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

4. Խնամատար ընտանիքին վճարվող դրամական միջոցները չեն կարող պակաս լինել մեկ երեխայի համար նախատեսված՝ պետության հոգածության կենտրոններում երեխաների շուրջօրյա խնամքի և դաստիարակության

համար գումարի չափից:

## Բ Ա Ժ Ի Ն VII

### ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

#### **Հոդված 141. Ամուսնության կնքումը Հայաստանի Հանրապետության տարածքում**

Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ամուսնությունը կնքվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

#### **Հոդված 142. Ամուսնության կնքումը հյուպատոսական հիմնարկներում**

1. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ամուսնությունը կնքվում է Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում:

2. Օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետությունների հյուպատոսական հիմնարկներում կնքված ամուսնությունը Հայաստանի Հանրապետությունում վավերական են փոխադարձության պայմաններով:

#### **Հոդված 143. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունների ձանաչումը**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջև ամուսնությունները և Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև ամուսնությունները, որոնք կնքվել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

2. Օտարերկրյա քաղաքացիների միջև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունները, եթե պահպանվել է այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

#### **Հոդված 144. Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունների անվավերությունը**

Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունների անվավերությունը որոշվում է այն օրենսդրությամբ, որը կիրառվել է ամուսնությունը կնքելիս:

#### **Հոդված 145. Ամուսնության լուծումը**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների միջև ամուսնության լուծումը Հայաստանի Հանրապետությունում կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջև կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև ամուսնալուծությունը, որը կատարվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

3. Օտարերկրյա քաղաքացիների միջև ամուսնալուծությունը, որը կատարվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

#### **Հոդված 146. Ամուսինների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները**

1. Ամուսինների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները որոշվում են այն պետության օրենսդրությամբ, որի տարածքում նրանք ունեն համատեղ բնակության վայր, իսկ համատեղ բնակության վայրը չլինելու դեպքում՝ այն պետության օրենսդրությամբ, որի տարածքում նրանք ունեցել են վերջին համատեղ բնակության վայր: Համատեղ բնակության վայր չունեցող ամուսինների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները Հայաստանի Հանրապետության տարածքում որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2. Ընդհանուր քաղաքացիություն կամ համատեղ բնակության վայր չունեցող ամուսիններն ամուսնական պայմանագիր կամ մեկը մյուսին ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն կնքելիս կարող են ընտրել ամուսնական պայմանագրով կամ ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ իրենց իրավունքներն ու պարտականությունները որոշելու համար կիրառման ենթակա օրենսդրությունը: Եթե ամուսինները չեն ընտրել կիրառման ենթակա օրենսդրությունը, ապա ամուսնական պայմանագրի կամ ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված նորմերը:

**Հոդված 147. Հայրության (մայրության) որոշումը և վիճարկումը**

Հայաստանի Հանրապետության տարածքում հայրության (մայրության) որոշումը և վիճարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրվում է հայրության (մայրության) որոշումը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում, երեխայի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ապրող ծնողները, որոնցից թեկուզ մեկը համարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, կարող են հայրությունը (մայրությունը) որոշելու մասին հայտարարությամբ դիմել Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներ:

**Հոդված 148. Ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները**

Ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները (ընդ որում՝ երեխաների ապրուստը հոգալու ծնողների պարտականությունը) որոշվում են այն պետության օրենսդրությամբ, որի տարածքում նրանք ունեն համատեղ բնակության վայր: Ծնողների ու զավակների համատեղ բնակության վայրի բացակայության դեպքում ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները որոշվում են այն պետության օրենսդրությամբ, որի քաղաքացին է երեխան: Հայցվորի պահանջով ալիմենտային պարտավորությունների և ծնողների ու զավակների միջև այլ հարաբերությունների նկատմամբ կարող է կիրառվել այն պետության օրենսդրությունը, որի տարածքում մշտապես ապրում է երեխան:

**Հոդված 149. Զափահաս զավակների և ընտանիքի այլ անդամների ալիմենտային պարտավորությունները**

Զափահաս զավակների ալիմենտային պարտավորությունները ծնողների օգտին, ինչպես նաև ընտանիքի այլ անդամների ալիմենտային պարտավորությունները որոշվում են այն պետության օրենսդրությամբ, որի տարածքում նրանք ունեն համատեղ բնակության վայր: Համատեղ բնակության վայրի բացակայության դեպքում նման պարտավորությունները որոշվում են այն պետության օրենսդրությամբ, որի քաղաքացի է ալիմենտ ստանալուն հավակնող անձը:

**Հոդված 150. Որդեգրումը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխայի որդեգրումն օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձի, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից, ինչպես նաև որդեգրումը վերացնելը կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխայի որդեգրումն օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձի, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ նախնական համաձայնությունն ստանալու դեպքում:

Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից օտարերկրյա քաղաքացի երեխային որդեգրելիս անհրաժեշտ է ստանալ երեխայի օրինական ներկայացուցչի և այն պետության իրավասու մարմնի համաձայնությունը, որի քաղաքացին է համարվում երեխան, ինչպես նաև որդեգրման համար տասը տարին լրացած երեխայի համաձայնությունը, եթե դա պահանջվում է նշված պետության օրենսդրությամբ:

2. Եթե որդեգրման հետևանքով կարող են խախտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված երեխայի իրավունքները, ապա որդեգրում չի կարող կատարվել անկախ որդեգրողի քաղաքացիությունից, իսկ կատարված որդեգրումը ենթակա է վերացման դատական կարգով:

3. Օտարերկրյա քաղաքացիների, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս որդեգրված Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ, միջազգային իրավունքի նորմերով թույլատրելի սահմաններում իրականացնում են Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկները, որտեղ նշված երեխաները մինչև չափահաս դառնալը գտնվում են հաշվառման մեջ:

Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց որդեգրած Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխայի հաշվառման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ապրող երեխայի որդեգրումը, որը կատարել է օտարերկրյա այն պետության իրավասու մարմինը, որի քաղաքացին է որդեգրողը, Հայաստանի Հանրապետությունում վավեր է որդեգրման համար Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ նախնական համաձայնությունն ստանալու դեպքում:

*(150-րդ հոդվածը լրաց. 08.07.05 ՀՕ-144-Ն, 08.02.11 ՀՕ-46-Ն)*

**Հոդված 151. Օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակության պարզումը**

1. Օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմեր կիրառելիս դատարանը կամ քաղաքացիական կացության

ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները և այլ մարմիններ այդ նորմերի բովանդակությունը պարզում են համապատասխան օտարերկրյա պետությունում՝ դրանց պաշտոնական մեկնաբանությանը և կիրառման պրակտիկային համապատասխան:

Օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը պարզելու նպատակով դատարանը, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները և այլ մարմիններ կարող են սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա իրավասու մարմիններ՝ համապատասխան պարզաբանում ստանալու համար կամ ներգրավել փորձագետների:

Շահագրգիռ անձինք իրավունք ունեն ներկայացնելու օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը հավաստող այն փաստաթղթերը, որոնց վրա նրանք հիմնվում են իրենց պահանջներն ու առարկությունները հիմնավորելու համար, կամ այլ կերպ՝ աջակցել դատարանին և քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններին և այլ մարմինների՝ օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը պարզելու համար:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան ձեռնարկված միջոցներով ողջամիտ ժամկետներում չի պարզվում օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմի բովանդակությունը, ապա կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

**Հոդված 152. Օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի կիրառման սահմանափակումը**

Օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերը չեն կիրառվում այն դեպքում, եթե նման կիրառումը հակասում է Հայաստանի Հանրապետության իրավակարգին (հանրային կարգին): Այդ դեպքում կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

**Բ Ա Ժ Ի Ն VIII**

**ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԵՎ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 153. Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենսգրքին ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո: Օրենսգրքը գործողության մեջ դնելու օրվանից մեկ տարվա ընթացքում պահանջվում է օրենսգրքին համապատասխանեցնել ընտանեկան օրենսդրության նորմեր պարունակող օրենքները և իրավական այլ ակտեր: Մինչև ընտանեկան օրենսդրության նորմեր պարունակող օրենքները և իրավական այլ ակտեր օրենսգրքին համապատասխանեցնելը դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում օրենսգրքին:

2. Սույն օրենսգրքին ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքը (18 հուլիսի 1969 թվականի) և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության՝ «Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքը կիրարկության մեջ դնելու կարգի մասին» հրամանագիրը (27 նոյեմբերի 1969 թվականի):

**Հայաստանի Հանրապետության  
Նախագահ**

**Ռ. Քոչարյան**

2004 թ. դեկտեմբերի 8  
Երևան  
ՀՕ-123-Ն  
ԵՐԵՎԱՆ